

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ”

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԹ. ՏԱՐԻ — 1935

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի

ՄԻԽԻԹԱՐԻՏԵՆ ՄԻՇԵՐԵՆՈՒԹԵՆԵՆ ԿՈՂՄԵՆԷ Ի ՎԻԵՆԱՆ ԱՂԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՂՁԱՅԻՆ ԵՆՕՍՏԱՐ ԲԱՆԱՍԷՆՆԵՐՈՒ:

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան օտարալեզու արեւելագէտներուն, Խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր քանասիրական յօդուածներուն համառոտ մէկ ամփոփումը, մեջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագրին Է աւելի նորին համար՝ 1 ֆրանկ տարեկան, կամ 1 ֆրանկ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE “HANDES AMSORYA,”

VIENNE (Autriche), VII., Mechitharistengasse 4.

ԾՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ա. եւ Մ. Գարակեօզեան Առեւտրական տունը հաճեցաւ առատաձեռնօրէն նուիրել Խմբագրութեանս հայատառ գրամբենայ մը, որուն համար հրատարակուած մեր շնորհակալութիւնը կը յայտնենք:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅՈՒՅԱԿ ԳՐՈՅ

ՄԻՒԽԻԹԱՐԻՏԱՆ ԵՄԱՐԻՆԻ ԲՔԲԵՍԵՆ ԵՆ ԲՎԵՆԵԱ

1776—1934

Յոսցակին մէջ Աջանակուած գիւնդը գործընդհանուր ֆրանկով նա:

52. Բարիկեան Հ. Ա., Յայտանդիմանութիւն... Թէ Օձնեցին իցէ Իմաստասէր: 1817, 80:

Մտառած:

53. Բիշոփ, Լեհաստանի հին իրաւունքը. տե՛ս Գալիւսիան Հ. Գ., Ուսումնասիրութիւնը...:

54. Գարբիլեան Մ. Ս., Ահնայ գաւառաբարբառը եւ արդի հայերէն լեզուն: 1912, 80, էջ Է + 416: (Ազգ. Մատ. 67:)

Փր. 6.—

= Ուսումնասիրութիւն Ահնայ գաւառաբարբառին:

55. Գազանեան Յ., Եւրոպիոյ Հայոց գաւառաբարբառը: 1899, 80, էջ Է + 124: (Ազգ. Մատ. 34:)

Փր. 1-50

= Ուսումնասիրութիւն նոյն գաւառաբարբառին ձայնադիտութեան, բառաթերթի, ասացուածներու, առածներու եւ քերականութեան:

“HANDES AMSORYA,”

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

XLIX. JAHRGANG — 1935

Herausgegeben und redigiert von der

MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN

unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges £ 1.—.

Unsere Adresse:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 5-7

ՄԱՅԻՍ—ՅՈՒԼԻՍ

ԽԹ. ՏԱՐԻ 1935

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՎԵՐՏ

ՆԻ ԻՆԻ ՊՈՏՄՈՒԹԻՒՆՆ ԿՈՒՍՏԱՆՍՏՆՈՒԹՅԱՆ ԳՆՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹԻՒՆ

(Շարունակութիւն:)

45. ԲԱՂԱՔԱԿԱՆ ՄԹՆՈՂՈՐՏԸ «ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԵՆ ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՎԵՐՏԻ (570)

562ի աշնան, երբ Յուստինիանոս Ա.ի (527—565) եւ Սոսրով Ա.ի (531—579) մէջ 50ամեայ խաղաղութիւնը կը կնքուէր¹, պայմաններու մէջ կը շեշտուէր, թէ խաղաղութիւնն ընդհանուր ըլլալու է եւ տարածուած պետութեան բովանդակ երկրամասերու վրայ, մէջն ըլլալով նաեւ Հայաստան եւ Լազիկիան. «Հաստատուն եւ յուժի իցեն դաշինքն եւ զօրեացն յամենայն տեղիս ե՛ւ յարեւելս ե՛ւ ի Հայս ե՛ւ յաշխարհին Լազիկացոց²»: Սոսրով Պարսից իշխանութեան տակ գտնուող Հայաստանի մասին էր, որ համեմատութեամբ Պարսկաստանի միւս նահանգներու սկսեալ 387էն միշտ առանձնական գերբ մը գրաւած էր:

Սաղաղութեան դաշինքն զատ առանձին միաբանութիւն մ՛ալ եղաւ երկու պետութիւններու մէջ, որ պարսիկ քրիստոնեաներու վիճակին եւ անոնց հանդէպ բռնութիւն վարմունքին կը հայէր. բնագրին քերթն ըն Միքսոս ձեռնարկը, «վասն որ ի Պարսս քրիստոնէից» բացատրութիւնը կը պարփակէր իր մէջ այն «հաւատացեալ քրիստոնեաները», որոնք կը բնակէին «յԱսորեստանի, ի Սուսոսից կը բնակէին Պարսից աշխարհին որ արքայից արքայի ընդ իշխանութեամբ են³», այս ինքն կը գտնուէին ասորա-

արամէական երկրամասերու եւ Շօշաստանի մէջ, ուստի դուրս հանելով Կովկասեան նահանգները՝ Հայաստան, Վրաստան եւ Աղուանից աշխարհը, որոնք քրիստոնեայ էին արդէն Պարսից գերիշխանութեան ենթարկուելէ յառաջ:

Պարսկաստանի այս «հաւատացեալ քրիստոնեայք» իրենց հաւատքով, աշխարհահայեւորութեամբ եւ կենցաղով անջատուած բոլորովին զրադաշտականներէն՝ ձգած էին իրենց վրայ մոզերու ատելութիւնը: Տեսանք վերադրոյն (§ 36), թէ ի՛նչպէս այս ատելութիւնը երբեմն ծայրայեղ մոլեռանդութեան իսկ կը հասնէր, երբ կ'աճէր մոզերու շարքերու մէջ զենակորոյսներու թիւը: Սկսեալ Շապուհ Բ.ի օրերէն սակաւ ընդհատութեամբ տեղի կ'ուներին հարածանքներ քրիստոնեաներու դէմ: Նենային հարածանքներ քրիստոնեաներու դէմ:

Սասանեան արքայից համար բացի կրօնական տեսակէտէ կար նաեւ քաղաքական ծանրակշիռ շարժառիթ մտահոգուելու քրիստոնեաներէ: «Քրիստոնէութիւնը հոռմէական պետութեան մէջ տէրութեան օրէնք ճանչցուելէն ի վեր, կը գրէ Գիւլաշիրոք, պարսիկ ցուելէն ի վեր, կը գրէ Գիւլաշիրոք, պարսիկ քրիստոնեաները Հոռմի կամ Բիւզանդիոնի քրիստոնեաները իրենց բնական պաշտպանները իշխողները եւ ինչպէս որ եկեղեցական սկսան համարել եւ ինչպէս որ եկեղեցական ինդիկներու մէջ անոնցմէ կախուած կը նկատուէին իրենք զիրենք, այսպէս ալ իրենց ներքին ատեն կայսերական կառավարութեան կը դիմէին եւ անկէ կը խնդրէին եւ կը սպասէին գործնական օգնութիւն: Անդին Սասանեանք, որոնք իրենց աւատ տէրութիւններուն՝ Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանքի քրիստոնեայ ըլլալը մեծ վտանգ կը համարէին իրենց հոն ունեցած ազդեցութեան, առանց իրենց հոն ունեցած ազդեցութեան, առանց իրենց հոն օգնող քրիստոնեայ հպարտութեան չէր, որ իրենց բուն քրիստոնեայ հպարտութեանց ժամանակ վտանգաւոր մտա-

¹ Ա.Շքի առաջ ունիմ Կ. Գիւլաշիրոք, Բիւզանդիոն եւ Պարսկաստան եւ անոնց գիւլաշիրոքեան եւ պարսկական յարաբերութիւնները Յուստինիանոս ժամանակ, գերմաներէնէ թարգմանեց Հ. Հ. Համբարեան, Վիեննա 1911, էջ 60—150: ² Մեռնոյր, 208. Գիւլաշիրոք, 77: ³ Գիւլաշիրոք, 41. «Թուղթ Հայոց ի Պարսս ասորապետութեան»:



527-66

Խոսքով անտարբեր աչքով չէր նկատեր սպառնացող ամպերը, որոնք կը կուտակուէին քաղաքական հորիզոնին վրայ: Թուրքերու եւ Պարսից մէջ սկսած էին արդէն թշնամութիւնները: Մինչդեռ կը պատրաստուէր ինքը արշաւել Թուրքերու դէմ, սուլաւ հրամաններ Հայաստանի եւ դրացի քրիստոնէայ աշխարհներու համար. պէտք էր օր յառաջ ջնջել այն կողմերը քրիստոնէութիւնը, կրօնքով եւ բարոյութեամբ սերտիւ ձուլել ժողովուրդը Պարսից հետ: Կը յուսար այս եղանակաւ անջատել սյդերկիրները Կայսեր արդեցութենէն:

Ահա այս միջոցին էր, որ հասաւ Կ. Պոլիս Հայաստանէն պատգամաւորութիւն մը, որ հատուածելով Պարսիկներէն կ'ուզէր Կայսեր իշխանութեան ենթարկուիլ, եթէ յանձն առնէր Կայսրը զէնքով պաշտպանել Հայաստանը Պարսից դէմ (571):

46. «ՀԱՅՈՅ ՊԱՏԵՐԱԳՄԻ» ԴՐՎԱՊԱՏԱՌՆԵՐԸ

572ին, երբ Հայաստանէն մեծաթիւ փախստականներ, անոնց թուին մէջ Յովհաննէս կաթողիկոս, եպիսկոպոսներ եւ ազատներ, Կ. Պոլիս հասան, պատմեցին ի լուր աշխարհաժողով մարդկան, թէ Հայաստան ապստամբեցաւ արքայից արքայի դէմ, որովհետեւ անիկա կը հալածէր Հայոց եկեղեցին, կը ստիպէր քրիստոնէայ ժողովուրդը՝ բռնի ընդունելու զրազաշտական դէնը, հրամայած էր կանգնել Դուին մայրաքաղաքի մէջ ատրուշան: Նոյնը հաստատեցին յետոյ Վրաստանի փախստականները:

Հայ եւ վրացի փախստականներու պատմածները զրի առած է Յովհ. Եփեսացի իրբեւականը. նոյնը արձագանգ դտած են նաեւ հեռաւոր երկիրներ. Գրիգոր Տուրոնի եպիսկոպոսն եւ Յովհաննէս Բիկլարեցի արձանագրած են զէպերը իրենց պատմական գործերու մէջ: Կը վկայեն նաեւ Բիզանդական պատմագիրները. որովհետեւ, ինչպէս եղիչէ կը զրէ «Արեւելք եւ արեւմուտք գիտացին» Հայաստան կատարուած եղելութիւնը (67):

Թէպէտ արտաքին ազդեւորները զրի առած են իրողութիւնը այնպէս ինչպէս ըմբռնած են ժամանակակից անցքերը, բայց եւ այնպէս Թ. Նէօրէիէ եւ Է. Շտայն կասկածելի կը պանեն հայ եւ վրացի փախստականներու հատուած տեղեկութիւնները, կը կասկածին անոնց ստուգախօսութեան մասին, համարելով թէ վկաները քողարկել ուզելով Ապստամբու-

թեան քաղաքական նպատակը, աշխատած են կրօնական հալածանքի մը կարմիր պատկերը դժել: Դուին մէջ կրակատուն մը կանգնելու հրամանին մէջ չեն տեսներ յիշեալ Հեղինակները կրօնական հալածանքի մը ազդանշանը: Եթէ կարող էին, կ'ըսեն, քրիստոնէաները ունենալ իրենց արօթատունները մոգակրօնիկ պետութեան մը նահանգներու մէջ, ինչո՞ւ պիտի զլացուէր նոյնը պարսիկ գործակալներուն՝ պետութեան քրիստոնէաներէ բնակուած նահանգներու մէջ: Պետութեան այս արգար պահանջը անհանդուրժողութեան ցոյց կարելի չէր համարել. բայց անհանդուրժող կը ներկայանան Հայերը, երբ կը զլանան նոյն իրաւունքը Պարսիկներուն¹:

Բայց կ'անտեսեն յիշեալ հեղինակները, թէ Հայաստան 387էն սկսեալ կը դանուէր Պարսից լուծին ներքեւ: Եթէ յընթացս իրր երկու դարու չէին յայտնած պարսիկ գործակալները իրենց փափազը ունենալ Հայաստանի մէջ իրենց հրապարակական կրակատունը, եւ եթէ փորձած ալ էին կառուցանել նոյնպիսի

¹ Ernst Stein, Studien zur Geschichte des byzantinischen Reiches, էջ 21 կը զրէ. «Դեռ այսօր համբուռնաբար այն անմիտ առասպելը, թէ Հայերը իրենց հաւատքի համար ենթարկուած ըլլան հալածանքի, կը հերքէ քաղաքային այն պարագան, որ նոյն ինքն Հայոց յետոյ պատմածներուն համաձայն հալածանքներու իսկական եղելութիւնը յայնմ կը կայանայ, որ պետութիւնը ուզած է Դուին մայրաքաղաքի մէջ կրակատուն մը կառուցանել. ստուգիւ սարսափելի՝ հարստահարութիւն, վասն զի նաեւ երկիրն բարձրագոյն պաշտօնէին, պարսիկ մարզպանին թոյլ տրուած պիտի ըլլար այսու իւր հաւատքը, պետական դէնը, նոյնպէս անարդէլ պաշտել ինչպէս իրաւունք ունէր ամենայեւորին իւր հպատակներէն ծառայել քրիստոնէութեան»: Հմմտ. եւ Նէօրէիէ, Tabari, էջ 162, ծան. «Ինչ որ Յովհ. Եփեսացի (Բ. 19) կը պատմէ Կղերականներու սպանման մասին, արտաքոյ կարգի կասկածական է. պատմութիւնը հաւանօրէն Հայերէն հնարուած է. որոնք սակայն շատ աւելի անհանդուրժող էին քան Պարսիկները, այնու որ թոյլ չէին տար ամենեւին որ իրենց երկրի մէջ ատրուշաններ կանգնուին»: Groh, Geschichte des oströmischen Kaisers Justin II. (Leipzig 1889), էջ 99 կը զրէր. «Խոսքով պարտք ունէր հոգ տանելու, որ իւր զրազաշտական հպատակներու արգար փափազը, չինել տաճարներ (կրակատուններ), կատարուի եւ հրամայեց որ ի Դուին ատրուշան մը կանգնուի...»: Այլուր կը զրէ E. Stein (անդ, էջ 23). «Անկէ յառաջ ի Պարսս քրիստոնէաներու դէմ յարուցուած հալածանքի մը մասին գրոյցը, զբռնք կաթողիկոսը յետոյ ի Կ. Պոլիս մատի փաթթոց ըրաւ, կարող են պատմական կորիզ ունենալ այն իմաստով որ կրակատուն մը կառուցման հրամանը ելած է ժամանակ մը, երբ Խոսքովի եւ իւր քրիստոնէայ հպատակներու մէջ լարուած էին յարաբերութիւնները. թէ այս իւր սկիզբը քաղաքական պատճառնէ չունէ՞ր, կը լուծեք ըսե՞ք...»: Պետամբ կրօնական հալածանքի, թէ կաթողիկոսը ներկայացուցած ըլլայ Հայոց ապստամբութիւնը, բայց եւ այնպէս կ'աւելցնէ, թէ «Ստոյգ է սակայն, թէ ձիւր-Վնասպ մարզպանը... չունէր բարտաւոր ձեռք եւ ի գործ զբաւ բնութիւններ, այսպէս սպաննեց Կահանի մեծ-Տօրեղայրը՝ Մանուէլ Մամիկոնեանը» եւն:

մը, բախած էին ուժղին զիմադրութեան. ինչպէս եւ ինչո՞ւ ճիշդ այժմ հրապարակի վրայ կը դնեն այս խնդիրը: Հոովմէական Կայսեր պարտութիւնը արքայից արքայի բանակներու առջեւ քաղաքութիւն ներշնչեց անոնց: 562ի դաշինքը ձերբազատ ըրաւ պարսիկը «առնել զոր ինչ եւ կամեցի»: «Անհանդուրժողութիւն» էր առանց տարակուսի Հայոց զիմադրութիւնը մոգական կրօնին. յետագայի մը քայլը, զոր իրենց նախնիք արեամբ չափ ոգորելով զիմադրած էին առնել, չէին կրնար իրենք առանց արեան թոյլ տալ: Եթէ միակրօն երկիրն մէջ չէին հանդուրժեր անգամ այլափառ քրիստոնէաներուն ոտնկոխ տալ, եթէ աշխարհախումբ բազմութեամբ զիմած էին Խոսթիկ Նեստորականներու Դուին քաղաքի մէջ կառուցած տաճարին վրայ եւ դայն հիմնայատակ կործանած (555), ո՞րչափ աւելի պիտի անհանդուրժող ըլլային հանդէպ հրապարակական կրակատան մը, որուն կառուցման նպատակն էր հրապուրել քրիստոնէայ ժողովուրդը մոգութեան, եթէ՞ բարոյանէս եւ եթէ՞ նիւթապէս: Պարսիկ գործակալներու զեղծ կեանքը հրապարակատես էր հրապոյրները՝ քրիստոնէայ ժողովուրդն ալ ձգելու իրենց ետեւէն՝ դայթակղական էին արդէն: Ատրուշանի մը շինութեամբ պիտի ստանար մոգութիւնը հրապարակական նշանակութիւն. եւ անոր հետ զուգընթաց պիտի քարոզուէր մագղէզականութիւնը: Եթէ Յովհ. Եփեսացի Ապստամբութեան ծանրակէտը Ատրուշանի մը կառուցման վրայ կը դնէ, նոյն պատմիչը կը շեշտէ միաժամանակ թէ թաւաւորին կամքն էր նաեւ, որ քրիստոնէաները պաշտօնատար ըլլային կրակին: Պատմագիրն խօսքերը իր տարածութեան մէջ իմանալու է, մանաւանդ երբ վերջին կէտս բացայայտ կը հաւաստեն ուրիշ ժամանակակից պատմիչներ ալ:

Տեսանք վերագոյն, թէ Խոսքով ըլլալով հանդերձ «հանդուրժող» մը քրիստոնէութեան հանդէպ՝ թոյլ տուաւ մոգերուն, որ մոգութեան հալածանքի քրիստոնէաները պարսկական նահանգներու մէջ: Լեցուեցան բանտերը քրիստոնէաներով, անոնց թուին մէջ կային եպիսկոպոսներ, քահանաներ եւն: Կարելի էր ենթադրել ի յառաջագունէ, թէ նոյն արքան, որ ենթարկուած էր մոգերու ազդեցութեան, Ատրուշանի շինութենէն ետք պիտի յարուցանէր հալածանք մ'ալ Հայոց դէմ նոյն կրօնական հողի վրայ: Է. Շտայնի ծանօթ է թէ

կար հրապարակի վրայ Վաղարշի հրովարտակը 484էն, որ կ'արդիւնէր Պարսիկներուն Հայաստանի մէջ ատրուշան կանգնելու փորձն իսկ փորձել: Նոյն հրամանը թէ եւ վերահաստատած էին Կաւաս եւ նոյն ինքն Խոսքով, բայց եւ այնպէս կը հրամայուի դարձեալ կանգնել Հայոց ոստանին մէջ կրակատուն մը, անշուշտ ի հեճուկս երկդարեան զիմադրութեան, զոր ցոյց տուած էր հայ ժողովուրդը: Այժմ ալ, ինչպէս յառաջ, կրօնական բարեկամութենէ կամ մոլեռանդութենէ աւելի պաշտութենէ կամ մոլեռանդութենէ անհանգիստ քաղաքական ազդակներն էին մղիչ պատճառները. Պարսկաստանի սահմանները, մասնաւորապէս հիւսիսարեւմտեան նահանգները պաշտպանելու համար բիւզանդական ազդեցութեան առջեւ՝ ի ներքուստ գողել ժողովուրդները «ի մի օրէնս պետութեան», միաժողովուրդ մը կազմել եւ այսպէս անջատել քրիստոնէայ ժողովուրդները քրիստոնէայ դրացիէն եւ անոր ազդեցութենէն:

Պարսիկները Հայաստանի մէջ չունէին հրապարակական կրակատուններ: Թէեւ փորձուած էր այլ եւ այլ անգամներ կառուցանել հոն ատրուշաններ, բայց չէին ունեցած անոնք տեսական գոյութիւն: Կը պատմէ Փ. Բիւզանդ (Դ. 59) թէ արդէն Շապուհ Բ. ի օրով՝ Մերուժան Արժրուշի եւ Վահան Մամիկոնեան, որոնք կրօնափոխ եղած էին, «ատրուշան շինէին ի բաղում տեղիս եւ դմարդիկ հնազանդէին օրինացն Մագղեգանց. եւ բազումք յիւրեանց սեփականս շինէին ատրուշանս եւ զորդիս եւ զազգայինս իւրեանց տային յուսուճն Մագղեգանցն»: Կը խոստանար Մերուժան. «Թէ իցէ եւ կարացէ յաղթել Շապուհ Հայոց, եւ ունել դաշխարհն, եւ ինձ դարձ լիցի յիմ աշխարհն եւ յիմ տունն, նախ ես, ասէ, շինեցից ատրուշան յիմում տանն սեփականին» (Դ. 23): «Ատրուշան ի տան սեփականին», այս ինքն առանձնական ապարանքներու մէջ կառուցուած կրակատուններ կային ինչպէս Հայաստան նոյնպէս Վրաստան: Կ'ենթադրեմ թէ Արտաշատու կրակատունն ալ, զոր Սամուէլ երէց Արածայ եւ Արթուրաւ սարկաւազ 451ին կործանած էին. «որոց զկրակն անցուցեալ էր զԱրտաշատու» (Փարպ. 78), նոյնպէս Ռշտունեաց Ատրուշանը, զոր Սահակ եպիսկոպոս եւ Քաջալ սարկաւազ աւերած էին (Փարպ. 79), «ատրուշանք ի սեպականսն» էին:

Իսկական կրակատուններ շինուեցան 451էն ետք Սիւնեաց աշխարհին մէջ, երբ Սիւնեաց իշխան կարգուեցաւ Վասակի փո-

խարեն վարազվադան. սա «բազում տունս մոխրանոցս շինեալ յաշխարհին Սիւնեաց՝ ի դայթակղութիւն տանն իւրոյ» (Փարս. 85) :

Արտաշատը Ե. դարուն երկրին շահաստանն էր. կային հոն մեծ թուով պարսիկներ : Նոյն դարուն վերջերը շահաստանը փոխադրուեցաւ Դուին. հոս 551ին կը յիշուի նոյնպէս ատրուշան մը «ի տան սեպհականի» . Ս. Յիզտիրուզիտի վկայարանութեան մէջ² կը կարգանք. «Մախոջ մոգ ի գաւառէն որ կոչի Բերշապուհ, ի գեղջէն որոյ անունն Քու նարաստան . . . եկեալ յԱյրարատ գաւառ՝ բնակէր յօտանին Հայոց ի Դուին, յարեալ ի մոգս ուրուհն Հայոց Համարակարի, որում անունն էր Խոսրով-Պերոզ. եւ արհամարհանօք զմոգութիւնն անցուցանէր : Եւ լինէր ի ձմերային ժամանակի, ի Մեհեկանին՝ ըստ Պարսկաց ամսոյ սկիզբն. եւ ըստ սովորութեանն իւրեանց զհոս աղտէզ մատուցանէին հրոյն յապարանս համարակարի : Եւ երանելին Մախոջ կայր ընդ նոսա յառակի, պնդեալ զբերանն : Եւ բարձրացեալ բոցն ի ճարպոյն, հասանէր ի դարաւանդակ տանն եւ բորբոքէր : Իսկ մոգուցն ժողովեալ զզոհելն՝ զհուրն փութացան շիջուցանել. եւ ոչ կարացին. եւ արտաքս ընթացեալ պատմէին զիրան : Եւ որ հարապետն էր Հայոց՝ իբրեւ լուաւ զձայն ամբոխին, փութապէս հասանէր ի դուռն Եկեղեցոյն, ստիպէր զպաշտօնեայն անուղ զսուրբ Խաչն եւ բերել յապարանն, զի թերեւս մերժեացի հուրն, որ առ նեղութեանն ակամայ հաւատայր» : Ս. Խաչը կը բերուի եւ հրդեհը կը շիջանի : Այս տեղի կ'ունենայ Նիսորականի մարզպանութեան օրերուն : Ս. Խաչի հրաշագործութիւնը պատճառ կ'ըլլայ Մախոջի ընդունելու քրիստոնէութիւնը. կը նահատակուի 553, Նոյեմբեր 9ին :

Համարակարի ապարանքին հրդեհումը եւ Մախոջի դարձը շատ նշաւակիչ էին անշուշտ մոգութեան համար : Այս դէպքէն քիչ ետքը հասաւ Դուին երկից յանձնախումբը, որոնց մին մոգպետ էր : Անոնք պիտի քննէին երկրին ներքին խնդիրները : Պէտք է ենթադրել թէ տեղւոյն պարսիկ համայնքը դրաւ հրապարակի վրայ քարաշէն ատրուշանի մը հարկաւորութիւնը : Բայց այս խնդիրը կարելի չէր լուրջ ուշադրութեան առնել, քանի կար Վաղարշի հրովարտակը. միւս կողմէն սկսած էին Կայսեր եւ արքայից արքայի մէջ խաղաղու-

թեան բանակցութիւնները. ժամանակը չէր Հայոց պատճառաւ բարդութիւններ ստեղծել ի վնաս խաղաղութեան :

562ին կնքուեցաւ խաղաղութիւնը. որուն ոյժը կը տարածուէր նաեւ Հայաստանի վրայ : Կայսրը չունէր այլ եւս իրաւունք միջամտելու հայկական հարցին մէջ. նոյն իսկ պարտաւոր էր եթէ տփգոհ տարրերը հատուածելով ի Պարսից զինէին իրեն, չընդունիլ եւ վերադարձնել : Արքայից արքան, որ յաղթական դարձած էր պատերազմի դաշտէն, չունէր այլ եւս երկիւղ Բիւզանդիոնէն. կարող էր նուիրուիլ երկրին ներքին հարցերուն, կազմակերպել երկրին ներքին ոյժերը, լուծել տնտեսական հարցերը :

Յովհաննէս Եփեսացոյ համաձայն պետական Խորհուրդի ներկայացուցած լուծելի հարցերէն մէկն էր ձուլել երկիրը կրօնապէս մէկ զանգուածի, պետական օրէնքի կաղապարի վրայ : Քրիստոնէայ ժողովրդեան զիմադրութեան ծանօթ էին : Բայց եւ այնպէս երաւ արքայատուր հրամանը, ի մի օրէնս դարձնելու պետութեան բոլոր նահանգները առանց աշտուութեան : Ատրուշան մը պիտի կանգնուէր Դուին :

Որչափ ալ ատրուշանի մը կառուցումը քրիստոնէութեան համար անմիջական վտանգ կարելի չէր նկատել, բայց եւ այնպէս քրիստոնէութեան հետ անհաշտ թշնամութիւնը, զոր ունէին մոգերը, եւ մերթ ընդ մերթ հալածանքները, զորոնք կը յարուցանէին անոնք, զոյացուցած էր համոզումը, թէ պետական կրօնին ոտնկոխ տալով երկրին մէջ, պիտի ստեղծուէր առիթ մոգական կրօնի քարոզութեան, որ կարող էր վտանգաւոր դառնալ ժողովրդեան համար : Բռնի կրօնափոխութեան սպառնալիքներ եղած էին Յազկերտի, Պերոզի եւ Կաւատի օրով :

Պետութեան քայլ առ քայլ նուաճումները երկրին ներքին կարգերու, դատավարութեան յանձնումը մոգերուն, հարկահաւաքութեան համար պարսիկ պաշտօնեաներու նշանակումը, հազարապետութեան բարձումը, այր եւ ձիոյ երկարժամանակեայ դեղերումը օտարութեան մէջ, պարսիկ պաշտօնէից գեղծ վարքը, զայթակալից կենցաղը, արթնցուցած էին տփգոհութիւն եւ կասկած :

Ինչպէս պատմութեան ընթացքէն կը տեսնուի, զուր տեղ չէր Հայոց կասկածը : Ատրուշանի կառուցման հետ երեւան եկան ձգտումներ, բռնագրաւելու քրիստոնէական եկեղե-

ցիներ, հեռացնելու ժողովուրդը քրիստոնէութենէ եւ մոգութեան շահելու :

Նոյն պատճառներն էին 450ին եւ 480ին, որոնք ստիպեցին Վարդան եւ Վահան Մամիկոնեանները զէնք ձեռք առնելու. Վարդան ինկաւ Արտաղու դաշտին վրայ զիւցազնարար զոհ իւր հաւատքին եւ Վահան զէնքը վարդաւ այն ժամանակ միայն, երբ առաւ Վաղարշին կրօնի ազատութեան հրովարտակը : Կարճէ լսել հոս Ղազար Փարպեցոյ տողերը նկատմամբ վերջին կէտիս, որոնք շատ տեսակէտներով կապ ունին 570ի շարժման հետ :

Վահան Մամիկոնեանի 484ին Նիսորին ներկայացուցած հաշտութեան պայմաններու առաջին կէտն էր .

«Ես կամիմ եւ ամենեքեան սոքա որ աստէն իսկ են . . . դայս երիս խնդիրս տալ մեզ զրով եւ կնքով թագաւորին . . . Եւ է մին յեւրոյն՝ նախ եւ առաջին խնդիրս այս կարեւոր եւ պիտանի. եթէ զհայրենի եւ զբնիկ օրէնս եւ ի մեզ թողուք եւ զհայ այր զոք մի՝ մոգ ոչ առնէք, եւ ումեք յաղագս մոգութեան զհոս աստիւ չտայք, եւ զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք, եւ զեկեղեցոյն հետ մամանս չտայք տեսնել. եւ քրիստոնէայ Եւրոպայն չտայք տեսնել. եւ քրիստոնէայ մարդկան եւ քահանայից զկարգ եւ զպաշտօնն քրիստոնէութեան համար անմիջական վտանգ կարելի չէր նկատել, բայց եւ այնպէս քրիստոնէութեան հետ անհաշտ թշնամութիւնը, զոր ունէին մոգերը, եւ մերթ ընդ մերթ հալածանքները, զորոնք կը յարուցանէին անոնք, զոյացուցած էր համոզումը, թէ պետական կրօնին ոտնկոխ տալով երկրին մէջ, պիտի ստեղծուէր առիթ մոգական կրօնի քարոզութեան, որ կարող էր վտանգաւոր դառնալ ժողովրդեան համար : Բռնի կրօնափոխութեան սպառնալիքներ եղած էին Յազկերտի, Պերոզի եւ Կաւատի օրով :

Նոյնը կը կրկնէ Վահան յատենին Վաղարշու. «Հաւատոյ քրիստոնէութեան հաստատութիւն, մոգութեան եւ ատրուշանաց յաշխարհէս Հայոց բարձումն, զեկեղեցոյն ըստ մեր կամաց զպայծառութիւն եւ զպաշտօնս այր որ կարեւոր է մեզ եւ հարկաւորապէս պիտայի՝ կնքով թագաւորին հաստատեալ մեզ» (170, 35—38) : Վաղարշ առ այս կը պատասխանէ Վահանին եւ իրեն հետ եղող ուխտապահ նախարարներուն. «Տուեալ եղիցի ձեզ մեր գրով եւ կնքով զամենայն խնդիրդ ձեռքս որ միջիւր ցյալիտեանս : . . . Բայց զուր պատակութիւն, զոր արժան է ծառայից առ տեսարս առնել՝ հատուցէք առ մեզ լիով եւ կատարեցէք» (174, 25—33) :

Այս հրովարտակը, տրուած արքայից արքայի կողմէն «մինչեւ ցյալիտեանս» տեսութեամբ, քանի ի զօրու էր, չըմբոստացան Վաղարշի արքայի զէմ. անոր հլու հպար-

տակները մնացին : Երբ չյարգուեցաւ այն Պարսից արքունիքի կողմէն, ի վսեր եկան նաեւ Հայք ի յաւանութեան դէմ. դարձուցին իրենց երեսը Կայսեր :

47. ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՂԻՇԷԻ ԲՆԱԳՐԻՆ

1. «Հայոց պատերազմի» անցքերը, զորոնք արտաքինք եւ ներքինք ի լրոյ կը պատմեն, Եղիշէ նկարագրած է իբրեւ ահանատես. «ոչ ի կարծ ընդոստուցեալ եւ ոչ ի լուր զարթուցեալ, այլ ես ինքնին անձամբ անդէն ի տեղուցն պատահեցի եւ տեսի եւ լուայ» (14) :

Ահանատեսի այդ մանրագին նկարագրութիւնները, զորոնք տուած է Եղիշէ Գ. եւ յաջորդ Յեղանակներու մէջ, հասած են մեզի նոր խմբագրութեան ենթարկուած : Խմբագրողը անքաղաք է հնարաւոր ձեւի մէջ պիտը ջանք տարած է հնարաւոր ձեւի մէջ այլայլել Եղիշէի 571ին եւ յաջորդ տարիներուն տեղի ունեցած «Հայոց պատերազմի» պատմութիւնը եւ վերածել զայն 451ի Վաղարշանոց պատմութեան : Այս իրողութիւնը շատ յաճախ չեղտեցինք յընթացս ուսումնասիրութեանս. կը չեղտեցայ այս տեղ վերջին անգամ : Արդեամբք այս «խմբագրութեան» կատարուած են Սիզոնազարին մէջ յապաւումներ, յաւելուածներ, եւ ետեւաւորութիւններ : Տեսանք նոյնպիսիներ նաեւ Ա. եւ Բ. Յեղանակներու մէջ : Մեր աշխատանքը պիտի ըլլայ այս գլխուն մէջ մաքրել Գ. Յեղանակը այս յաւելուածներէն. այս աշխատանքը անով պիտի զիւրանայ, որ հոս յաւելուածները ըստ մեծի մասին մուծուած են Ղ. Փարպեցոյ Բ. Դրուագէն, զոր ունինք սմբողջութեամբ մեր առջեւ : Փոխառութիւնները Ղազարէն թէպէտ առջեւ են արդէն եւ շատ անգամ քննութեան ծանօթ են արդէն եւ շատ անգամ քննութեան նիւթ եղած է Եղիշէի քննադատներու կողմէն, ինչպէս պիտի տեսնուի մեր արդէն : «Հայոց պատերազմի» պատմութեանն :

2. Եթէ չունենայինք աչքի առջ Ղ. Փարպեցոյ կարմիր Վարդանի նուիրած Դրուագը, որ նկարագրուած են այնքան կենդանի գոյններով Վարդանի եւ Վասակի դէմքերը, պիտի չկարենայինք Եղիշէի նկարագրութեան կազմել անոնց մասին պայծառ դադարիար. այնպէս մութ են Եղիշէի տուած զիմագծերը եւ ժամանակի պատկերը : Մթութիւնը որ կ'իջիւն Եղիշէի Պատմութեան մէջ նաեւ Ղազարի լուսով հնարաւոր պիտի չըլլայ փոխառել. որով-

² Վարք եւ վկայարանութիւնք Սրբոց. Բ. (Վեներաբիլ 1874), 123—130. Acta Sanctorum Novembris.

հետևե Եղիշէ ոչ մէկ Վարդան է, որ նկատի ունի եւ ոչ ալ մէկ Վասակ, զոր կը նկարագրէ. նաեւ պատմական դէպքերը այլազան են այն դարու պատմական անցքերէն, որոնց մասին կը խօսի Ղազար. Եղիշէի Վարդանը երկդիմի է եւ Վասակը՝ երեքդիմեան:

Դիմագծերը, որոնք կը հային Կարմիր Վարդանին եւ Սիւնի Վասակին, նոյնպէս դէպքերը, որոնք այդ երկուքի ժամանակին կը պատկանին, առնուած են Ղ. Փարպեցիէն: Բնականաբար զուր է փնտուել խմբագրին քով պատմութեան այն պայծառ նկարագրութիւնը եւ դէպքերու այն զօղեալ յաջորդականութիւնը, որոնք նախանձելի կ'ընեն Ղ. Փարպեցիին:

Ինչ կը վերաբերի 2. դարու անցքերուն՝ նկատի պիտի չառնենք այս տեղ. պիտի մատնանշենք միայն Ղազարէն փոխառութիւնները:

3. Եղիշէի համաձայն Պարսից մոզերը կը դրդեն թագաւորը, որ պետական կրօնը պարտադիր ընէ պետութեան հովանւոյն տակ ապրող բոլոր ազգերուն. առաջարկութիւնը կը հաճոյանայ Յաղկերտ Բ.ին. անոր կամքը Միհրանեսէ մեծ հաղարպետ նամակով մը կը յայտնէ Հայոց: «Յաղկերտ» եւ «Միհրանեսէ» անունները ծանօթ են խմբագրին Ղ. Փարպեցիէն: Վարազվադանի դերը 450ի կրօնական հալածանքի մէջ նկատի չէ առած խմբագիրը:

Հայ եպիսկոպոսներու ժողովը հաւանութեամբ նախարարներու կը պատասխանէ Միհրանեսէի նամակին: Եպիսկոպոսներու անուանացանկը փոխ առնուած է Ղազարէն (§ 39):

4. Թագաւորը զայրացած Հայոց տուած մերժողական պատասխանին վրայ, կը հրամայէ, որ հայ նախարարներու գլխաւորները ի Դուռն կանչուին: Առ այս կը դրեն երկու պատմագիրները.

Ղ. Փարպեցի, 47. Եւ թագաւորն Յաղկերտ իրրեւ լուաւ զայս ամենայն ի մոզուցն եւ յամենայն դրան աւագանւոյն՝ սրտմտութեամբ զայրացեալ՝ հրաման եւ վաղ՝ վաղակի հրովարտակա առնել յաշխարհն Հայոց եւ Վրաց եւ Աղուանից... զի ամենայն տանուտեարքն եւ աւագ սեպուհքն... փութով... ի դուռն եկեացն.

Եւ այսպէս միարանեալք ուխտիւք եւ երգմամբ երեքեան աշխարհքն՝ Հայք, զարս, զոր ինքն ճանաչէր Վերք, Աղուանք, գնացին ի Դուռն: Եւ որք ի ժամուն ի մեծամեծ աւագանւոյն Հայոց յուղի անկեալ ճանապարհորդեցան՝ այսուքիկ են.

1. Ի տոհմէն Սիւնեաց Վասակ Սիւնեաց տէրն, որ եւ ի ժամուն մարդպանն էր Հայոց.
2. Եւ ի տոհմէն Արծրունեաց Ներշապուհ.
3. Ի տոհմէն Ռշտունեաց Արտակ.
4. Ի տոհմէն Խորխոռունեաց Գաղիշայ.
5. Ի տոհմէն Մամիկոնից Վարդան, Հայոց սարապետ եւ տէրն Մամիկոնից.
6. Ի տոհմէն Մոկաց Արտակ.
7. Ի տոհմէն Ապահունեաց Մանէն.
8. տոհմէն Ամատունեաց Վահան.
9. Ի տոհմէն Վախեունեաց Գիւտ.
10. Ի տոհմէն Անճաւացեաց Շմաւոն. եւ յաշխարհէն Վրաց՝ բռեշին Աշուշայ եւ այլ տանուտեարք աշխարհին:

... այլ միայն հրաման տուեալ յախանէ յանուանէ զարս, զոր ինքն ճանաչէր (§ ...). որոց անուանքն են այս.

1. Ի տոհմէն Սիւնեաց Վասակ անուն.
2. Ի տոհմէն Արծրունեաց Ներշապուհ անուն.
3. Ի տոհմէն Ռշտունեաց Արտակ անուն.
4. Ի տոհմէն Խորխոռունեաց Գաղիշայ անուն.
5. Ի տոհմէն Մամիկոնեցից Վարդան անուն.
6. Ի տոհմէն Մոկաց Արտակ անուն.
7. Ի տոհմէն Ապահունեաց Մանէն անուն.
8. Ի տոհմէն Ամատունեաց Վահան անուն.
9. Ի տոհմէն Վախեունեաց Գիւտ անուն.
10. Ի տոհմէն Անճաւացեաց Շմաւոն անուն.

Չայս նախարարքս յախանէ յանուանէ կոչեցին ի Դուռն արքունի. եւ կէսքն առ նմա իսկ էին ի կարաւանին. եւ այլքն ի կողմանց հիւսիսոյ ի Հոնաց պահակին... (§ 43, 2):

Եղիշէի Պատմութեան մէջ առաջին անգամ այս տեղ երեւան կու գայ Վասակի անունը. այսպէս «ի տոհմէ Սիւնեաց Վասակ անուն», առանց որ եւ է ուրիշ տխրոսի կամ անոր մասին որ եւ է ծանօթութիւն մը տալու: Ղ. Փարպեցի իւր Բ. Դրուագը կը սկսէր Վասակի եւ անոր փեսայի՝ Վարազվադանի մէջ ծագած անհամաձայնութեամբ ի պատճառս Վասակի դստեր, որ կիինն էր Վարազվադանի: Վերջինս փախչելով իւր աներոջ վրէժխնդրութենէն՝ դացած էր Տիգրան, որ րացած քրիստոնէութիւնն եւ գրգռած Միհրանեսէն իւր աներոջ դէմ, ցոյց տալով թէ զիւրին է Հայերը մոզութեան դարձնել: Այս

նախաւոր տեղեկութեանց անդիտակ է Եղիշէ. անիկա զանց ըրած է նաեւ Փարպեցւոյ հակիրճ ծանօթութիւնս Վասակի մասին՝ «որ եւ ի ժամուն մարդպանն էր Հայոց»: Եղիշէ յաջորդ էջերու մէջ — ինչպէս պիտի տեսնենք — կ'ենթադրէ Վասակի «մարդպան» ըլլալը, ըստ անփոյթ գտնուած է այս մասին գոնէ ակնարկութիւն մ'ընել: Նոյն անփոյթութիւնը պործած է նաեւ Վարդանի մասին, որուն անունը նոյնպէս առաջին անգամ հոս կը յիշատակուի այսպէս անպաճոյճ «ի տոհմէ Մամիկոնեանց Վարդան անուն»: Իսկ քիչ յետոյ առանց անունը տալու կը ներկայացնէ զանիկա «Սպարապետ»: Կ'ենթադրէ՞ Եղիշէ խմբագրի, թէ իւր ընթերցողները Ղ. Փարպեցիէն գիտեն արդէն Վարդանի «Հայոց սպարապետ» ըլլալը: Ուշադրութեան արժանի է որ Վարդան ինքնին կ'ըսէ, ըստ Եղիշէի (78), իւր նիզակակիցներուն, թէ «ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեր կացուցէք» զիս. ուստի 450էն յառաջ «սպարապետ զօրաց» էք, այլ առ այն պատերազմ միայն նշանակուած է նախարարներէն, եւ ոչ արքայից արքայէն: Եթէ այս պարագան կը հակասէ պատմութեան 450 տարւոյն համար, ունի այն լիուրի համաձայնութիւն 571 տարւոյն դէպքերուն հետ:

5. Թագաւորը կ'առաջարկէ նախարարներուն ընդունիլ մոզութիւնը: Հայ նախարարք ի սկզբան կ'ընդդիմանան: Կը սպառնայ թագաւորը. կ'որոշեն նախարարք կեղծեօք ուրանալ: Եղիշէ Ղազարի ազդեցութեան տակ է. յառաջ կը բերեմ մանր համեմատութիւններ.

Փարպեցի, 48—53. Եղիշէ, 34—38. Ապա եթէ... յամառեալ Մոնչելով բարբառ արքայիք դուք... առ ոչինչ ձաղկեալ եւ ասէ... Եթէ համարեմ զայնչափ ի ձէնջ ծունր ոչ կրկնեւլիք... օղուտս եւ զվաստակս, այլ կնաւ եւ որդուվք եւ ազդաւ կորուսանեմ ի միջոյ:

Մոնչելով բարբառ արքայիք դուք... առ ոչինչ ձաղկեալ եւ ասէ... Եթէ համարեմ զայնչափ ի ձէնջ ծունր ոչ կրկնեւլիք... օղուտս եւ զվաստակս, այլ կնաւ եւ որդուվք եւ ազդաւ կորուսանեմ ի միջոյ:

Յայնժամ ի մի վայր ժողովեալ... խորհուրդ ի մէջ առեալ թէ զինչպիսի թէ սրպէս զանձինս եւ զսի-

հնարիւք... Եւ իւրացն ընլիս հանցնն ի մեծ նեկարացնն դտանել:

Յայս միտս առ վայր մի հաւանեցան... առ ժամ մի յանձն առնուք պատճառանօք զհրամայեալս ճառանօք զհրատ հնարից, զի առ նոցա: (Նախարարք կ'ըսեն Վարդանին). Եթէ դու եւեթ առ վայր մի կարացես յանձն առնուլ զպատճառանօք զասացեալս թագաւորին եւ զերծուցես զմեզ...: Յանձն առ վայր մի զպատճառանօք վիրաւորին վասն երեցունց աշխարհացն եւ բաղմութեանց ի նոսա արանց եւ կանանց:

Պատգամ ի ներքս յէջին զնոյն խրատտուն իւրեանց, իւր թէ կատարեսցին կամքս զմեզ...: Յանձն առ վայր մի զպատճառանօք վիրաւորին վասն երեցունց աշխարհացն եւ բաղմութեանց ի նոսա արանց եւ կանանց:

Եւ այնպէս միարանեալք ամենեքեան յանձն առնուին կատարել խաբէութիւնն իւրեանց ի ձէնջ ի յիշելով լորին. եւ երթեալք ի տուն մոխրանոցին... ցուցանէին... զպատճառանօք ոչ ճամարտութեամբ զխորհուրդն իւրեանց ի նորա ամբարշտութեանն կատարեցաք. բայց ի ծածուկ զխորհուրդս Տէր ինքնին վկայէ մեզ, որպէս անբակ կացեալ եմք ի նմանէ. զոր եւ դուք ինքնին իսկ զիտէք, վասն սիրելեաց մերոց՝ որ ի մեծի նեղութեան էին, հնարս ինդրէաք վասն յանդրը հանելոյ. զի նոքօք հանդերձ մարտ եղեալ կուռեցուք ընդ անօրէն իշխանին վասն հայրենի աստուածատուր օրինացն: Եւ իբրեւ նոցա ոչինչ կարացաք օղղմաւ ամեկոյ զկարիս եւ նել, անհնար լիցի այս՝ զվիշտս զկնոջ եւ զորդոց եթէ վասն մարմնաւոր սիւեւ զազգի... (ուրանալ զճամարտութիւն):

Վարդան կ'ըսէ (51). Քաւ լիցի ինձ յաղապս զմտաւ ամեկոյ զկարիս եւ նել, անհնար լիցի այս՝ զվիշտս զկնոջ եւ զորդոց եթէ վասն մարմնաւոր սիւեւ զազգի... (ուրանալ զճամարտութիւն):

6. Թագաւորը նախարարները մեծապատիւ եւ մեծապարգեւ կը մեծարէ. եւ ճանապարհ կը հանէ ի Հայս: Ղ. Փարպեցւոյ եւ Եղիշէի համապատասխան տեղիքներն են.

Ղ. Փարպեցի, 34. Եղիշէ, 38—39. Եւ զայն տեսալ քաղաւորին Պարսից եւ ամենայն մեծամեծաց դրանն եւ մոզուցն նուէրս ազի ազի լազուս ինդութեամբ վա-

Չայն իբրեւ լուա քաղաւորն, յոյժ ցնծացեալ բերկրեցաւ, կարծեցեալ զուրն (!) հասանել նմա յօշնականութիւն... եւ

և մոգերու արարքներուն. Հանդուրժելով «զաւետարանն ի ձեռն առեալ հասին եւ անկան՝ առանց հարցանելոյ՝ ի վանս Սպարապետին, ուր ժողովեալ էին զօրքն Հայոց: Համբարձին զձայնս իւրեանց եւ ասեն... Չերով խորհրդով զորձեն զայն անօրէնութեան հարիս Մարգարանն եւ Մոզպետն»...: Ի վանս Սպարապետին ժողովուած զօրքը ոտք կը կանգնի, կ'երջնու հրապարակաւ բարձրացնել ապստամբութեան զրօշը «յոսն կացին միաբան համբարձին զձայնս իւրեանց առ Աստուած եւ ասեն...: Իսկ մի ոմն ի նախարարացն որ անդ զիպեցաւ, էր ի նորա (Մարգարանի) խորհրդի. եւ ոչ միաբանեաց ընդ նոսա ի մեծ վիպութիւնն. եւ անդէն առ ժամայն ի տեղւոջն քարկոծեցաւ ի նոցունց. եւ ահ մեծ անկաւ ի վերայ ամենեցուն» (49—50):

Այս հատուածին համար խմբագիրը աչքի առաջ ունեցած է նաեւ Ղ. Փարպեցւոյ հետեւեալ տեղիքը. վերոյիշեալ զաղանի ժողովէն ետքը «յայտնապէս ժողովեալ միաբանութեամբ ամենայն տանուտեարքն Հայոց եւ սեպուհք, եպիսկոպոսք եւ բազմութեամբ ամենայն քահանայիւք եւ ժողովրդովք առ երանելի սպարապետն Հայոց տէրն Մամիկոնէից Վարդան, եւ հանդերձ նովաւ մտին թախ ըստ զրոց հրամանին՝ բոլորեքեան առ իշխանն Սիւնեաց Վասակ, առ Մարգարանն Հայոց. եւ յայտնեալ նմա միաբան ամենեցուն զխորհուրդն...: Եւ երգուեալ ամենայն բազմութիւն զօրացն... եւ համբարձեալ առ հասարակ զձեռս ընդ երկինս՝ բարբառելով առնէին...» (61):

9. Փարպեցւոյ այս տեղիքը, ուր Վասակ կ'երջնու Մ. Աւետարանի վրայ՝ նախարարներու հետ միաբան մասնակցիլ ապստամբութեան, երկրորդ անգամ աչքի առաջ ունի խմբագիրը հետեւեալ հատուածին մէջ. Ապստամբութիւնը տեղի կ'ունենայ. «զբազումս կոտորեցին... Իսկ զՄարգարանն ձերբակալ արարեալ. եւ միաբանէր ընդ նոսա երդմամբ՝ հաստատուն կալ յուխտին. եւ զղջանայր զառաջին քակտումն ի նոցանէ: Անկանէր ազաւթարութեամբ յոսա եպիսկոպոսացն եւ աղաչէր խաղապատելով՝ զի մի՛ մերժեալ ընկեացի առ ի նոցանէ. կրկնէր եւ երեքկնէր զանսուտ երգումն առաջի բազմութեանն ի սուրբ Աւետարանն. գրէր եւ կնիքի գերդումն եւ կապէր զԱւետարանէն. եւ աղաչէր զի յԱստուծոյ յայտնեացի վրէժխնդրութիւնն եւ մի՛ նոքա մարդկարար սատակեացեն զնա: Իսկ նոքա

թէպէտ եւ հաստատեալ զիտէին զնենդաւոր կեղծաւորութիւնն նորա, եթէ խարէութեամբ զառնայ անդրէն ի հին մոլորութիւնն՝ ոչինչ փոյթ առնէին ձեռն արկանել ի նա վասն առաջին յանցանացն, այլ սուրբ Աւետարանին թողին ի դատապարտութիւն» (50—51):

«Մարգարանը» Վասակն է. այս մասը ամբողջութեամբ խմբագրէն է. Ղ. Փարպեցւոյ համապատասխան հատուածն է. Վարդան եւ նախարարները հանդերձ եպիսկոպոսք եւ քահանայիւք կ'երթան «առ իշխանն Սիւնեաց Վասակ, առ Մարգարանն Հայոց» եւ կը յայտնեն անոր ապստամբութեան խորհուրդը. Վասակ «թէպէտ եւ ոչ կամաւ, սակայն ի հարկէ յանձն առեալ միաբանէր ընդ նոսա: Բերել դարձեալ հրամայէին... զԱւետարան... եւ երդուեալ ամենայն բազմութիւն զօրացն... Հանդերձ իշխանան Սիւնեաց Վասակա... հաստատէին գերդումն. եւ որոց մատանեաւ չեւ եւս էր կնիքեալ զԱւետարանն՝ կնքէին»: Եպիսկոպոսները իրենց աղօթքին մէջ կ'ըսեն. «Եւ որ ոք հեռացեալ յուխտէ երգմանցս այսոցիկ ցուցցի ուխտադանց եւ ի միաբանութենէս մերմէ որոշեցի՝ ելցէ նա արտաքս ընդ Յուդայի...: Եւ գրեալ զայս ամենայն բանս... եւ կնիքեալ նախ մատանեաւ իշխանին Սիւնեաց Վասակայ... եւ եղեալ ի սուրբ Աւետարանի երդմանն՝ ետուն ցպատուական եպիսկոպոսսն...» (62):

Եղիշէի խմբագիրը Վասակը յանուանէ չէ յիշած. ինչպէս նաեւ լուծ է Սպարապետի անունը, որ շարժման պարագլուխն էր եղած:

10. Կը գրէ Եղիշէ (54). «Եւ ահա յետ աւուրց բազմաց եկն եհաս հազարապետն Աղուանից սուրբ եպիսկոպոսաւ աշխարհին, մեծաւ տաղնապաւ փութացուցանէր զզօրսն ասելով. Գունդն Պարսից, որ էր ի կողմանս աշխարհին Հոնաց, դարձաւ այսրէն, եկն եմուտ յաշխարհս մեր. եւ բազում եւս եւ այլ այրուծի որ ի Դրանէ եկն: Եւ թող զայս ամենայն, այլ երեք հարիւր մող վարդապետ ածեալ ընդ իւրեանս պառակտեցին զաշխարհն»: Հայ նախարարները «արձակեցին զնոսա, զի առ ժամանակ մի զնոսա (զՊարսիկս) պատիր խարէութեամբ կալցեն...»: Իսկ իրենք, նախարարները, առ Կայսր պատգամաւորութիւն կ'ուղարկեն:

Խմբագիրը՝ Սկզբնագիրը թեթեւ փոփոխութեան մը, յատկապէս ետեւառաջութեան ենթարկած է, համաձայնեցնելու համար կարգը

Ղ. Փարպեցւոյ պատմութեան ընթացքին. Ղազար կը գրէ.

Ապստամբութեան հռչակելէն շարժ մը ետքը հայ բանակը «փութացան իջանել յԱյրաբատ գաւառ. քանզի լուան, թէ Միհրնեբուհ Արեաց հազարապետ եկեալ ի փայտակարան քաղաք՝ գունդ կաղմէ եւ ընդ Աղուանս արձակէ ի Հայս. զոր եւ Աղուանից ազատքն, որ ուխտակիցք էին Հայոց՝ ստէպ փութացուցանէին հասանել առ ինքեանս եւ անդէն յԱղուանս ի զիմի հարկանել նոցա պատերազմաւ» (63):

Յայտնապէս կը տեսնուի թէ Եղիշէի Սկզբնագրին մէջ խօսքը բոլորովին տարբեր զօրաշարժի մը մասին եղած է, քան որ կ'ակնարկէ Ղ. Փարպեցի: Այս մասին յետոյ ասանձին:

11. Կը պատմէ Ղ. Փարպեցի (63), թէ Հայերը ապստամբութեան հռչակումէն յառաջ արդէն որոշած էին Թէոդոս Կայսեր եւ ուրիշ սահմանակից յունական նահանգներուն զեպաններ ուղարկել եւ օգնութիւն խնդրել: Բայց այս որոշումը ի գլուխ կը հանուի հազիւ զինուորական շարժումները սկսելու ժամանակ, Վարդանի պնդումներու վրայ: Դեպքանները կը մեկնին. իսկ Վարդան իւր գունդով կ'աճապարէ դէպի Աղուանք, խափանելու պարսիկ բանակին յառաջխաղացութիւնը:

Եղիշէ (54—56) այս զեպանագնացութիւնը կը զետեղէ ապստամբութեան հռչակումէն, պարսիկ զօրաց կոտորումէն եւ երկրորդ թշնամիներէն մաքրելէն ետքը: Դեպքանները թշնամիներէն մասին պիտի խօսինք յետոյ ասանձին: Այստեղ ուշադրաւ է այն, որ Հայոց եպիսկոպոսի» անուան կից կը յիշուին նաեւ «Վասակ Մարգարան եւ Ներշապուհ Ռեմբուսեան հանդերձ ապարապետաւս եւ ամենայն մեծամեծ նախարարքս» (54). Վասակ առաջին եւ վերջին անգամ այս տեղ կը յիշուի «մարգարան» տիտղոսով: Զարմանալի է դարձեալ Սպարապետի անուան լուրթիւնը. զեռնչիտենք Եղիշէին անոր անունը:

12. Վարդանի դէպի Աղուանից արշաւանքի մասին այսպէս կը գրեն երկու պատմագիրները: Ուշադիր կ'ընենք, որ ուր կը շեղի Եղիշէ Ղազարէն, հոն Սկզբնագիրը կը խօսի:

Փարպ., 64. Եղիշէ, 56—57. Սպարապետն Հայոց տէրն Պարսիկոնէից երանելին զգունս Վարդան առեալ ընդ իւր զըն առաջին տային ցնեբ-

ի տանուտեարցն Հայոց... զամարէին զնա պահապան աշխարհին մերձ ի սահմանս Ատրպատական աշխարհին: Եւ զգունսս երկրորդ տային ի ձեռն Վարդանաց զօրավարին Հայոց՝ անցանել ընդ սահմանս Վրաց ի վերայ մարզպանին ձորայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից: Իսկ զգունդն երրորդ տային ի ձեռն Վասակայ իշխանին Սիւնեաց, որ ոչ ի բաց կացեալ էր յուխտէն հեթանոսաց ըստ ներբարձր ընդ նմա:

Եւ գորոց գիտէր զհոգն ընտրեաց եւ առ ընդ իւր լուրջն ի վատթար կողմն... Ի տանուտեարցն Հայոց եւ ի տեղիս Երանայ, որք էին երեւելու ի թիւն հաւատոց նոսա՝ 1. զիշխանն Բագրատակացն, որք էին իւրովք լաղչնք, եւ յայլ ուսմիկ լաղչնք: 2. զիշխանն Խորխորակաց զօրք իւրովք. 3. զիշխանն Ապահունաց զօրք իւրովք. 4. զիշխանն Վահեունաց զօրքն իւրովք. 5. զիշխանն Պայունաց զօրքն իւրովք. 6. զիշխանն Գարեղեմից զօրք իւրովք. 7. զիշխանն Ուրծայ զօրքն իւրովք. եւ զայլս բազումս զօրս յարկունի տանէն Էպի յիմնն եւ զանպուխս ոմանս յայլմէ տոհմէ: Եւ խորամանկ խաբէութեամբ զարանամուտ լինէր յամուրս իւրոյ աշխարհին, ի պատճառս կեղծաւորութեան եթէ ընդ ճաղուկ անդր անցանէ ի վերայ զնորն Պարսից՝ հատեն, լաճականս առնել յաշխարհէն Աղուանից:

Փարպ., 67. «Եւ որք խոտորեցան զինի սատանայի ընդ ուխտանեղին Վասակայ՝ են այսոքիկ. 1. զիշխանն Բագրատունաց, 2. զիշխանն Սիւնեաց, 3. զիշխանն Ապահունաց, 4. զիշխանն Վահեունաց, 5. զիշխանն Պայունաց, 6. զիշխանն Գարեղեմից, 7. զիշխանն Ուրծայ, 8. զիշխանն Կարսից, 9. զիշխանն Խորխորակաց, 10. զիշխանն Ապահունաց, 11. զիշխանն Վահեունաց, 12. զիշխանն Պայունաց, 13. զիշխանն Գարեղեմից, 14. զիշխանն Սիւնեաց, 15. զիշխանն Ուրծայ, 16. զիշխանն Կարսից, 17. զիշխանն Խորխորակաց եւ անպուխս ոմանս յայլմէ տոհմէ»:

Փարպ., 64. Իսկ նա յամբաժնուկ հաւալուցէն ձեպով զեպանս արձակէր առ գունդն Պարսից. Ահա աւաղիկ քաղակի զազո զեպանս առնէր առ Միհրնեբուհ հազարապետն Արեաց եւ զիւր կողմանս զգունդն, քայքայեալ լուծանեցի: Զգունս մական ծանուցանէր նմա զըն առաջին հեռացուցի ի նոյնպէս արար նամակ եւ կողմանս Հերայ եւ Զառն Նիխորական Սեբուխտ բաւանայր. եւ գունդս երկուսն զընդ իմով ձեռամբ զիւր խարէութեանն կամս:

յերանելի սպարապետէն ի սուրբ միաբանութենէն, վարդանայ... զգրեալսն անտէին եւ խառնէին ի շրջեցուցանել ընդ աշ- դուներս ուրացողացն: Խաբիս Հայոց. զոր լուեալ թուլացելոցն ի հաւատս... կորնչէին:

Ուշադրութեան արժանի է վասակի համարիտ նախարարներու այս երկրորդ ցանկը: Մինչ առաջինը թուով եւ կարգով ըստ ամենայնի նոյն է Փարպեցոյ տուած ցանկին հետ, երկրորդը կը շեղի անկէ թուով եւ կարգով: Փարպեցոյ ցանկէն աւելի են՝

1. Ռշտունեաց Արտակ.
2. Ակէոյ Ընձուղ.
3. Ամատունեաց Մանէն սեպուհ:

Պալուներք հոս կ'անուանուի «միւս եւս Պալուներք»: Իսկ Արեղենիք՝ եղած է Գարեղենիք: ա. Ռշտունեաց Արտակ իշխանի անունը հաւանօրէն առնուած է Փարպեցիէն, ուր կը յիշուի անգամ մը ի Գուռն դացող նախարարներու ցանկին մէջ (47):

բ. Նորարուր է «Իշխանն Ակէոյ Ընձուղ անուն»: Ակէ վասպուրականի գաւառներէն է. յիշուած առաջին անգամ ա՛յս տեղ, եւ երկրորդ անգամ էջ 77 «Ակէացիք» որոնք կը կուռին վարդանի դրօշին տակ: Կը յիշուի 554ին «Հոռոմանոս Ակէոյ եպիսկոպոս» (Գիրք թղ. 70). ուստի Չ. դարուն կ'երեւայ թէ Ակէ կարեւոր նշանակութիւն ստացած է, ոչ միայն ունեցած է իր «Իշխանն» եւ զօրքը, այլ եւ թեմ եղած է սեպհական եպիսկոպոսով:

գ. «Սեպուհն Ամատունեաց Մանէն անուն» անձանօթ է Ղ. Փարպեցոյ. որ գիտէ Առանձար եւ Առնակ Ամատունի սեպուհները (86): Յիշեցինք վերագոյն (§ 33) Մանան հարապետը, որ 490—505ի շրջանին կ'իշխայ. անիկա հաւանօրէն Ամատունի էր: Մանան եւ Մանէն անուննց նոյնութիւնը ապացոյց կրնայ ծառայել անունն Ամատունեաց տոհմին սովորական յորջորջանքը նկատելու:

դ. Ինչո՞ւ Պալուներք «միւս եւս յաւելուածն առած է Եղիշէի քով: Հաւանօրէն Սկզբնագրին մէջ յիշուած էին կրկին Պալուներ իշխաններ. Եղիշէ կը յիշէ 77 (= Փարպ. 64) «Արտակ Պալուներ» եւ 93 «յազգէն Պալունեաց արին Արտակ» (Փարպ. 72, յազգէն Պալունեաց երանելի սեպուհն Արտակ): Չեմ կարծեր թէ «միւս եւս Պալունեաց» ակնարկէ Տարօնի «Պալուներ կամ Պալունեաց երկիրը» (Չեմնոր, 25, 36, 43. հմմտ. Հիւրբման, 221 ծ.):

ե. Եղիշէի խմբագրութեան Փարպեցոյ Արեղենները վերածած է Գարեղենների. կ'երեւայ թէ իր օրով այս երկու գաւառները միացուած էին: Մ. Սորենացոյ ընծայուած Աշխարհագրութեան մէջ կ'ըսուի թէ Երասխ «բաժանէ զԳարեղենս ի հարաւ եւ զԱրեղենս եւ զՀաւունիս (Հաւունիս) ի հիւսիսի՝ գնալով ընդ մէջ Արշարունեաց» (հրատ. Սուքրեան, 33. հմմտ. Հիւրբմ., 246, 248):

զ. Կարգին համար համեմատէ 554ի եպիսկոպոսաց ցանկը (Գ. թղ. 70).

- | | |
|-------------------------------|----------------------------------|
| 1. Գրեկոր Արժրունեաց եպ. | 1. Ռշտունեաց Արտակ իշխան. |
| 2. Մահակ Ռշտունեաց եպ. | |
| 3. Սողոմոն Մոկաց եպ. | |
| 4. Ստեփանոս Անձեւացեաց եպ. | |
| 5. Հոռոմանոս Ակէոյ եպ. | 7. Ակէոյ Ընձուղ իշխան. |
| 6. Գրիստոսիոր Պալուներեաց եպ. | 9. Պալուներեաց վ.՝ Ծապուհ իշխան. |

Ասոր նման ցանկ մը գտած է խմբագիրը Սկզբնագրին մէջ եւ փոխած է անունները Փարպեցոյ ցուցակին համաձայն, իսկ յիշեալ երկուքը պահած է անփոփոխ:

է. Չարմանալի է սակայն Սմբագիրը: Անիկա Ռշտունեաց իշխանը կը ներկայացնէ համարիտ վասակայ, բայց «զօրքն Ռշտունեաց» կը կուռի «Աւարայրի» առջեւ իբրեւ վարդանայ զինակից (77). նոյնպէս «Ակէացիք», որոնց Ընձուղ իշխանը վասակի կողմնէն կը անցած յիշեալ ցանկին համաձայն, հոս զինակից են վարդանայ: Ասկէ յայտնապէս կը տեսնուի թէ Սմբագիրը Սկզբնագրին մէջ Նախարարներու բոլորովին ուրիշ խմբաւորում մ'ունէր, քան որ Ղազար կը ներկայացնէր 450ի համար:

14. Երբ հայկական դունդը տակաւին յԱղուանս էր, գուժկան կը հասնի Հայաստանէն թէ ապստամբած է վասակ. Եղիշէ կը գրէ.

«Իսկ իբրեւ գայս կատարեցին եւ արարին իւրեանց մեծապէս հաստատութիւն. եւ զեռ դութեամբ՝ գուժկան հասանէր յաշխարհէն Հայոց՝ զճակատ հարեալ եւ զօճիս պատահեալ վասն ապստամբին վասակայ. յետս կացեալ յախտէն քրիստոնէութեան եւ աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք զօրացն էին՝ զԳառնի եւ զԵրամօնս... եւ զնահանգն Արատաշտու եւ զԱրատաշտոն ինքնին գլխովին, եւ զամենայն գեօղս եւ զաւանս՝ որ շուրջ զնոյ վաւ էին՝ առեալ աւերեալ եւ հրձիգ արարեալ,

եւ զամենեցուն ձեր զընտանիս փախուցեալ մերժեալ յիւրաքանչիւր ընակութենէ... դերի վարեալ զընտանիս քահանայից եւ զնոսին կապեալ եւ եղեալ ի բանդի... Եւ զօրքն որ անդ մնացեալ էին՝ խոյս տուեալ յանօրինէն մերժեցան յեղր աշխարհին... բայց որ ընդ նմայն էին, են ոմանք որ փախեան յիւրաքանչիւր տեղիս եւ բազումք այն են՝ որ զհետ մուրեցան նորա ամբարշտութեանն:

Չու արարեալ < վարդանայ > ի տեղուղէ անտի՝ դառնալ անդրէն յաշխարհն Հայոց մեծաւ ստիպով եւ բազում աւարաւ եւ անչափ մեծութեամբ»:

Վասակ երբ կը լսէ վարդանի յաջողութիւններն յԱղուանս եւ վերադարձը «մինչեւ յանդիման եղեալ էին միմեանց՝ զգիշեր մի օգնական գտեալ նորա՝ փախստական անկանէր յամուրս իւրոյ աշխարհին. եւ այնպէս սաղմապաւ մերժեցաւ < զի եւ > զգերի եւ զաւարն զոր առեալ էր յԱյրարատ գաւառէ՝ ահամայ զիւրն եւս եթող եւ փախեաւ» (60—61):

Ըստ Եղիշէի վասակ Սիւնեաց աշխարհի մէջ կը գտնուէր, երբ վարդան յԱղուանս կ'արշաւէր: Ե՛րբ ժամանակ ունեցաւ Այրարատ հասնելու եւ «զբազում տեղիս աշխարհին Հայոց» աւերելու: Այս հնարաւոր էր Փարպեցոյ համաձայն, որովհետեւ վասակ մնացած էր Միջնաշխարհին մէջ իւր համախորհուրդներուն հետ:

Այս ընդարձակ հատուածը էական մասով Սկզբնագրին կը վերաբերի. ան կը հայի մասմբ 571ի ապստամբութեան օրերուն տեղի ունեցած զէպերուն եւ մասամբ փլիպոյոս Սիւնեաց տիրոջ 573/74ին յԱյրարատ եւ ի վանանդ կատարած ասպատակութեանց: Սմբագիրը այս կերպարանքի տակ ներկայացուցած է զանոնք, որպէս զի գուզագրէ Ղ. Փարպեցոյ հետեւեալ տեղիքին. ընդգծուած բառերը փոխառութիւններ են Ղազարէն (66—67):

«Եւ մինչդեռ այս ամենայն կատարէր այսպէս (յԱղուանից աշխարհին) յաջողութեամբն Աստուծոյ ըստ կամաց նոցա՝ յանկարծակի դեպքան հասանէր առ երանելի զօրավարն Հայոց վարդան եւ առ ամենայն գունդն որ ընդ նմա էին, գոյժ տրտմութեան եւ համբաւ չարաչար տայր նոցա, ասելով, թէ Ստեաց աշխարհն վասակ ուխտին Աստուծոյ... ի յետս նօրէն վասակ ուխտին Աստուծոյ... ի յետս կացեալ ապստամբեաց ի միաբանութենէն նշմարտութեան. նոյնպէս եւ մնացեալքն առ

նմա աւագանին Հայոց յետս կացեալ՝ ընդ նմա ապստամբեցին... դեսպան արձակեցին ի Պարսս եւ նամակօք ուխտադրեցին ընդ նոսա. եւ գրեղեան ամրոցացն Հայոց ի բաց կալան եւ զիւրեանցն բերդակալս արարեալ՝ զդուրացուցին: Եւ զօրդիս տոհմին Մամիկոնէից եւ կամսարականաց եւ զայլոց տանուտեղացն ժողովեալ յիւրաքանչիւր դայեկաց՝ յամուրս բերդից իշխանութեանն Սիւնեաց եւ անցուցանել, եւ հրամայեաց պահել զամուրսն զգուլութեամբ. եւ ապա նենդաւորն վասակ տայ տանել զտղայն առ թագաւորն Պարսից»:

Այս լուրին վրայ՝ «չունցին միաբան ամենեքեան յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց ի դաւառն Այրարատոյ. եւ անդ զաւուրս զանաշունչ օդոյ ձմերայնոյն ըստ սովորութեան իւրեանց զաղարեալք՝ փութային առ հասարակ անձկով զաւուրս զարնանային ամսոյն տեսանել» (67—68):

15. Յետ Չատակահան տօնին լուր կը հասնի թէ «գօր եհատ բազում ի Հեր եւ ի Չարեւանդ դաւառ» (68): Տեղի կ'ունենայ Աւարայրի կռիւը: Այս մասին կը գրեն երկու պատմագիրները.

- | | |
|---------------|---|
| Փարպ., 71—72. | Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրք եւ ամենայն պատուովն սպտորատէին եւ որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղուղն. զան տէրն Մամիկոնէից ըստանեալ զիւր գունդն յերիս առաջ՝ միջոցի գնդին կարգէր զկաւար 1. զտէրն Արժրունեաց եւ զմարդպետն Միհրապուհ, 2. հանդերձ իշխանան Արշարունեաց Արշարաւ եւ թաթուրն Գրիստոսի. 3. երանելի արամբն Արտակ իշխանան Մոկաց եւ այլ աւագ նախարարօքն. եւ այլ աւագ նախարարօքն. եւ կողմանն այլ կարգէր Մամիկոնի Մամիկոնի 4. զերանելի Մամիկոնի 5. հանդերձ իւրաքանչիւր զաւարս 6. սուրբ անուանեալ Մամիկոնի 7. զանուանեալ Մամիկոնի 8. զանուանեալ Մամիկոնի 9. զանուանեալ Մամիկոնի 10. զանուանեալ Մամիկոնի 11. զանուանեալ Մամիկոնի 12. զանուանեալ Մամիկոնի 13. զանուանեալ Մամիկոնի 14. զանուանեալ Մամիկոնի 15. զանուանեալ Մամիկոնի 16. զանուանեալ Մամիկոնի 17. զանուանեալ Մամիկոնի 18. զանուանեալ Մամիկոնի 19. զանուանեալ Մամիկոնի 20. զանուանեալ Մամիկոնի 21. զանուանեալ Մամիկոնի 22. զանուանեալ Մամիկոնի |
|---------------|---|

Փափազաւ եւ այլ իշխան խոստովան արքունի. եւ նախարարօքն Հայոց: ... 9. եւ զՀամագաստական զիւր եղբայրն թողոյր վերջապահ...
 23. Խուրս Սրուանձտեանց. եւ 24. Գողեանքն. եւ 25. Ակէացիքն. եւ 26. Տրպատունիքն. 27. եւ զօրքն Ռշտունեաց եւ ամենայն զործակալքն արքունի իւրաքանչիւր զօրքն հանդերձ:

Եղիշէ, 90.

Իսկ արին վարդան յառաջ մատուցեալ եւ զաւազանին հարցանէր. եւ միւրան ամենեցուն խրատու զգորազուկան կարգէր. զգունդն առաջին տայր ի ձեռն 1. իշխանին Արծրունեաց. եւ 2. նիղակակից նմա զմեծ իշխանն Մովսէս. եւ զայլն ամենայն նախարարեան համահարգս երկոցունց. եւ զամենայն բազմութիւն զնոյն թեւս աստի եւ անտի կազմէր նոցա: Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն 3. Խորենայ Սարխոտունեաց եւ 4. նիղակակից նմա զԼնծայինն եւ 5. զներսեհ Քաջրեւրուի: Եւ զգունդն երկրորդ մատուցանէր ի ձեռն 6. Թաթուր վանաղեցոյ եւ նիղակակից նմա հրամայէր. 7. զՏաճատ Գնթունի եւ զրազուս ի քաջ արանց աստի եւ անտի ի թեւս նոցա: 8. Յանձն իւր տանոյր զգունդն չորրորդ. եւ 9. նիղակակից իւր զքաջն Արշաւիր. եւ 10. զհարազատ եղբայր իւր զՀամագաստական:

Այս համեմատութիւններու մէջ ուշադրութիւն կը դրաւ այն անուանացանկը, ուր վարդանի բանակին առաջաորդներու անունները կը թուին, անոնց հետ նաեւ մասնակից տոհմերը: Վերջիններու թուին մէջ են նաեւ

- Գունդն վահեռունեաց,
- Զօրքն Ռշտունեաց եւ
- Ակէացիք:

Վերագոյն (էջ 71) երբ վասակի համաժառ իշխաններու անուանացանկը եւ տոհմացանկը կը տրուէր, կը շեշտուէր թէ ուխտագրութիւններու մէջ էին նաեւ

- Իշխանն Ռշտունեաց Արտակ
- » վահեռունեաց Գիւտ
- » Ակէացի Ընծուց:

Վահեռունեաց իշխանին վասակի կողմը բռնելուն նաեւ Ղ. Փարպեցի վկայ է: Բայց անիկա անձանօթ է Ակէացոց առ հասարակ կոխներուն մասնակցած ըլլալուն. իսկ Ռշտունեաց ուխտադրուծ եղած ըլլալը չի գիտեր: Ի՞նչ աղբիւրէ օգտուած է հոս Եղիշէ (Խմբագիրը), որ այս հակասութեան մէջ ինկած է: Ի մասին վահեռունեաց գիտենք որ 451ին վասակի կողմնակից էին, իսկ 571ին վարդանի եւ ընկերաց հետ ուխտապահ (Սեր., 48—51):

Նոյնպէս Ռշտունիք:

Այս ցանկը կը պարունակէ իր մէջ անուններ ալ, որոնք կը պակսին Փարպեցոյ ներկայացուցած պէսպէս անուանացանկերուն մէջ: Ասոնք են՝

- ա. Խոսրով Գաբեղեան,
- բ. Կարէն Սահառունի,
- գ. Գաղբիկ Դիմաքսեան,
- դ. Այրուկ Սլիւնի,
- ե. Շահ Խոստովան արքունի,
- զ. Խուրս Սրուանձտեանց,
- է. Գողեանք,
- ը. Ակէացիք,
- թ. Տրպատունիք:

Տոհմանուններէս Սլիւնիք, Տրպատունիք, Ակէացիք եւ Բողեանք բոլորովին նորարար են, անձանօթ են Ե. զարու մատենադիրներուն՝ Փ. Բիւզանդի, Ազաթանդեղոսի եւ Ղ. Փարպեցոյ:

Ակէ (հմտ. Ընծուց իշխան Ակէոյ) իբրեւ ուրոյն գաւառ վասպուրականի առաջին անգամ 554ին կը յիշուի պատմութեան մէջ, իւր նակին մէջ Ակէացիք սկսած են երեւալ իրենց դրօշով յընթացս Չ. դարու: 571ին կարող էին անոնք մասնակցած ըլլալ «Հայոց պատերազմին»: Խմբագիրը հոս կ'երեւայ թէ օգտուած է Եղիշէի Սկզբնադրին անուանացանկէն (հմտ. Աղոնց, Армения въ эпоху Юстиниана, 258, 263):

Տրպատունիք առաջին անգամ Չ. դարու Բ. կէսին կը յիշուին հայ նախարարներու ցանկին մէջ. Սերբոս կը յիշատակէ 590 շրջանէն Թէոդորոս (Թէոդոս), Ներսէս, վաստակ Սարգիս Տրպատունիները (48—51, 65, 66):

Սլիւնի տոհմին համար միակ հնագոյն վկան է Եղիշէ. կը յիշուի նաեւ Սահակ առաջին ծանօթ Գահնամակի մէջ (Աղոնց 258) «Մովսէսի, Սլիւնիք, Գնթունիք». անոր առ

ոանձին դեր տուած է Մ. Խորենացի իւր Պատմութեան մէջ (Գ. 8, 84):

Բողեանք, նոյնպէս առաջին անգամ Եղիշէի քով յիշուած, կը գտնուի նաեւ Սահակոյ Գահնամակի մէջ (Աղոնց, 244, 257) «Աղձնեանք, Բողեանք, Կազրունիք»:

Սրուանձտեանց տոհմէն Ղ. Փարպեցի մէկը գիտէ միայն. «Եղիշէն Սրուանձտայ երանելին Գարեգին» (72). Եղիշէ կը յիշէ ի թիւս նահատակաց «Եղիշէն Սրուանձտայ յառաջադէմն Գարեգին երկու հարազատօքն եւ ԺԸ արամբ» (93): Անոնցմէ մին կ'երեւայ «Խուրս Սրուանձտեաց» (77): Անունս Խուրս գիտէ Ղ. Փարպեցի (149) իբրեւ «Խ. ի գաւառէն Արշաժունեաց», որ կը կուսէր վահանի բանակին մէջ: Խուրս Սրուանձտեանց կ'երեւայ թէ 571ին վարդանի զինակիցներէն էր:

Սահարունիներէն 451ի կռուին մասնակից չկար ըստ Փարպեցոյ. բայց անիկա կը յիշէ «Ի տոհմէն Սահառունեաց» վասակ մը (125) եւ Քաջալ մը (144), որոնք վահանի նիղակակիցներն եղած են: Գաւիթ Սահառունի մ'ալ կը յիշէ 637ին (Սերբոս, 103): Կարէն Սահառունի հաւանօրէն 571ի կռուներուն մասնակիցներէն էր:

Խոսրով Գաբեղեան, որ Փարպեցոյ առաջին անգամ յիշուած է իւր պակսի, նոյնպէս «Հայոց պատերազմի» մասնակիցներէն եղած պէտք է ըլլայ: Փարպեցի Գաբեղեաններէն կը յիշէ միայն Գաբաղը, որ վահանի նիղակակիցն էր: Եղիշէ առ հասարակ Գաբեղեան եւ Արեղեան կը նոյնացնէ. վերջիններէս կը յիշէ Փարպեցի «Գաղբիկ տէրն Արեղեանից» (45), Փարպեցի «Գաղբիկ տէրն Արեղեանից» (67) եւ «Արեղեանից տէր» մը (195):

Գաղբիկ Դիմաքսեան, որ միայն այս ցուցակին մէջ կը յիշուի, անձանօթ է Փարպեցոյ. սա գիտէ նոյն տոհմէն միայն Հմայեակն եւ Թաթուրը, զորոնք նաեւ Եղիշէ կը յիշէ Փարպեցոյ Գաղբիկ Արեղեանը (45, 58) չի ճանչնար Եղիշէ. բայց կը յիշէ «Գաղբիկ մը», որ Խաղիսաղի ճակատամարտին մէջ կը վիրաւորուի Պարսիկներէն. այս պարագան ալ անձանօթ է Փարպեցոյ: Ենթադրելով, թէ Գաղբիկ Դիմաքսեան 571ի կռուի նիղակակիցներէն էր, կարող ենք անոր անձն տեսնել նաեւ այդ վիրաւոր Գաղբիկի մէջ, վիրաւորուած պէս Սարգիս Դիմաքսեան մէջ: Սերբոս կը յիշէ տակէ Սարգիս Դիմաքսեան մը իբր 600ին (Սեր., 65, 66) եւ Միհրու Դիմաքսեան մը (63) Սմբատ Բագրատունւոյ տան մէջ:

«Շահ Խոստովան (Չ. Շահառայեան) արքունի» կարօտ է մեկնութեան: Փարպեցի չի ճանչնար զանիկա: Գահնամակի մէջ կը յիշուին Շահառայեանք (Աղոնց, 245, ծան. 258). հաւանօրէն հոս յատուկ անուն մըն է Շահ եւ Խոստովան արքունի տիտղոս մը, որ զինքը Արքունիքի հետ կապակցութեան մէջ կը զնէ: Թերեւս ձիերու վրայ ընդհանուր հսկող: Հաւանօրէն 571ի շրջանին պէտք է միտտել զինքը:

Եղիշէի խմբագիրը «Վահան Ամատունին» եւս կ'անցնէ վարդանի նիղակակիցներու թուին մէջ. Ղ. Փարպեցոյ համաձայն վահանի կայսեր ուղարկուած զետպաններու թուին մէջ կարէն պարտութիւնն եւ Հայոց ապստամբութեան ճախողումը:

Այս նկատողութիւնները կը բերեն զմեզ այն համոզման թէ Եղիշէի խմբագիրը ցանկս, որ անձանօթ է Ղազարի, կազմած է Սկզբնադրին Մեղիտինէի կռուոյն մասնակից հայ նախարարներու անուանացանկին հետեւելով. Տոհմանունները պահած է լրիւ, իշխաններէն ոմանց — ծանօթից — անունները փոխած է հետեւելով Ղազարի:

16. Ղ. Փարպեցոյ այժմեան օրինակին մէջ, էջ 72, տ. 16 թուղթ ինկած ըլլալով, կը պակսի վարդանի նահատակութեան պարագան: Այս պակասը կ'երեւայ թէ նաեւ խմբագրին օրով գոյութիւն ունէր: Խմբագրին տուած մանրամասնութիւնները Աւարայրի կռուի մասին 574 թուին Մալաթիայի առջեւ անկողնեցած ճակատամարտին կը հային: Հայ բանակը վարդանի նահատակութեամբ կը քայքայուի եւ ի փախուստ կը գլխի: Այս նկատմամբ կը գրեն երկու պատմադիրները:

Եղիշէ, 93.

Փարպեցի, 72—73.
 Եւ մնացորդ փախուցիցն էր՝ որ սպրեցան, քան թէ յայլ եւ այլ տեղիս Հայաստան աշխարհիս ցրուեցան: Եւ հասարակ ի ժամուն երասեալ անկանէին ի տեղիս նելի եւ երկնաւոր կոչմանն եղեն արժանաւորք ընդ սրբոյն վարդապետ եւ նահատակեացն՝ են այսօրեկի յամուրս աշխարհիս...: Եւ այս անուանք են քաջ ի տեղուոյն կատարեցան: 1. յազգէն Խորխոռունեաց Երանելին Խորէն. 2. յազգէն Պարունեաց՝ Երանելի սեպուհն Արտակ. 3. յազգէն Գնունեաց՝ Երանելին Տաճատ. 4. յազգէն Գիւմախեանից՝ Երանելին Հմախեալ. 5. յազգէն Քաջրեանից: 1. Յազգէն Մամիկոնից քաջն վարդապետ ձԼԳ առամբ. 2. յազգէն Խորխոռունեաց Խորէն. 3. յազգէն Պարունեաց արին Արտակ ԹԹ արամբ. 3. յազգէն Պարունեաց արին Արտակ ԹԹ արամբ. 4. յազգէն Երանելից Երանելին Հմախեալ. 5. յազգէն Քաջրեանից Երանելին Հմախեալ. 5. յազգէն Քաջրեանից Երանելին Հմախեալ.

յետոյ անմխարան զտեալք նախարարքն Հայոց՝ թողին զոր խորհեցանն վասն թագաւորելոյ Վահանայ. եւ անցին զնացին առ մեծն Վարդան. զնաց եւ Վահան զհետ նախարարացն (այլ օր.՝ «ընդ նախարարսն») առ Վարդան յառաջագոյն՝ տալ նմա զվերակացութիւն Հայոց. եւ եղեն հնազանդեալ նմա զամենայն աւուրս Վարդանայ:

Բայց արքայն Պարսից հեռացեալ պատերազմաւ ի Բուշանն ի դուռն ձորայ. եւ երկիրս Հայոց յազանովանայր ի հինիցն Պարսից. եւ անդ սպանանի արքայն ի Բուշանաց եւ քագաւորէ ընդ նորա Յագկերտ¹⁴: Եւ սկսաւ ոգորել ընդ իշխանս Հայոց մեծաց խորխտանօք. որպէս ցուցանեն յիշատակարանքն առաջնոց պատմագրաց՝ գաւերումն Հայոց եւ գյամախել նեղութեանցն եւ գանքի բազմութիւն վկայից, որք վասն Գրիստոսի նահատակեցան...: Եւ պատմի այս ի Համասոտութեան Արքահամու խոստովանողի: Բայց թէ է՞ր ազգաւ պատմութիւն վկայութեան Վահանայ (Արծրունւոյ) ոչ է՞ր գրեալ ի գիրս պատմագրի՝ ստուգապէս առանց յերկուանաւոյ ցուցանեմք ըստ ուսումնասէր քաջահմուտութեանք»:

Յաջորդ գլխու մէջ յառաջ կը բերէ թովմաս Արծրունի Բարձումայի զրոյցը, որուն համեմատ Բարձումայ Եղիշէի պատմագրէն Վահան Արծրունւոյ վերաբերեալ հատուածը ի բաց կը հանէ (հմմտ. § 8), ուրիշ խօսքով Եղիշէի պատմագիրքը փոփոխութեան կ'ենթարկուի: Ըստ այսմ նախադասութիւնը «ոչ է գրեալ ի գիրս պատմագրի» կ'ահնարկէ Եղիշէի մատենանը: Թովմաս աչքի առաջ ունեցած է նաեւ «Յիշատակարանքն առաջնոց պատմագրաց», որոնք կը ճառեն «զաւերունն Հայոց (աշխարհին) եւ զյաճախել նեղութեանցն եւ զանթիւ բազմութիւն վկայից» են. այս «Յիշատակարանք» են անշուշտ Ղ. Փարպեցւոյ Բ. զրուակն եւ Եղիշէի պատմագիրքը. որոնք կը պատմեն 451ի «Վարդանանց պատերազմը», առանց «Վահան Արծրունւոյ» մասին թեթեւահնարկութիւն մ'ընելու: Ուստի յառաջ բերուած ընդարձակ հատուածը, որ Վահանի քաջագործութեանց կը հայէր, դասած է «Ի Համասոտութեան Արքահամու խոստովանողի» աղբիւր մը, որ անձանօթ է այժմ մեզի: Ի մերձուստ նայելով այդ աղբիւրէն յառաջ բե-

¹⁴ Սկզբնաղբիւր խանգարուած է. Պերոզ կը սպանուի Հեփթաղներու դէմ մղուած կռուի մէջ 484ին. կը յաջորդէ զահն վրաց իւր եղբայրն Վաղարշ:

րուած հատուածին, պէտք է խոստովանինք թէ այն այնպէս ինչպէս ներկայացուած է, չի կրնար ոչ Արքահամ խոստովանողի եւ ոչ ալ ուրիշ որ եւ է ժամանակակիցի մը զընչէն բղխած ըլլալ. հակաժամանակազրական տեղիքները կ'ազդակեն եւ կը բողբեն:

Դէպքերը տեղի կ'ունենան Պերոզի (458—484) վերջին տարիներուն. Վարդան Մամիկոնեան պարագլուխն է Ապստամբութեան: Կ'իշխայ Պերոզ «Բուշանաց» դէմ մղուած պատերազմի մէջ. եւ կը յաջորդէ անոր Յագկերտ Բ. (438—457). որ կը սկսի «ոգորել ընդ իշխանս Հայոց մեծաց...»: Ուստի 450—451ին: Յայտնապէս կը տեսնուի թէ թովմաս Արծրունի կարգացած է իւր աղբիւրի մէջ «մեծն եւ քաջն» Վարդան Մամիկոնեանի մը պատմութիւնը. եւ որովհետեւ այս անունով իրեն բացի կարմիր Վարդանէ ուրիշ մը ծանօթ չէ եղած, Վարդան Բ. ի օրով գործուած դէպքերն եւ զիպուածները վերագրած է կարմիր Վարդանի, առանց ուշադիր ըլլալու ժամանակի անհամաձայնութեան: Ապստամբութիւնը տեղի ունեցած է ժամանակ մը, երբ Պարսից թագաւորը «Բուշանաց» դէմ պատերազմով զրազած էր. Ղ. Փարպեցի Գ. Դրուակն մէջ կը պատմէր Պերոզի արշաւանքը «Հեփթաղներու» դէմ. ուր եւ կը սպանուի Պերոզ: Սոսրով Ա. ի արշաւանքը (570) «Թուրքերու» դէմ, որոնք Քուշանք եւ Հեփթաղք ալ կ'անուանուին ժամանակակիցներու քով, չփոթուած է Պերոզի արշաւանքին (484) հետ: Դէպքերը յանկարծակիս եւ յետագարձ ուստով կը փոխադրուին Ե. Ղարու երկրորդ քառորդին: Յագկերտ Բ., հայրն Պերոզի անոր թաղին ժառանգը կը ներկայացուի: Յայտնապէս երկու տարբեր դէպքեր միացուած, ձուլուած են, երկու ուրոյն, անմխասնական աղբիւրներէ ջուր ստնուած է:

Ինչպէս տեսան ընթերցողները ծանօթութիւններէն, թովմաս Արծրունի ունեցած է հոս 571ի Հայոց Ապստամբութեան պատմութիւնը. բայց զարձեալ խաթարուած կերպարանքի տակ, բարեբախտաբար այս անգամ միայն անունները ենթարկուած են փոփոխութեան, իսկ բնագիրը պահուած է անվթար: Թովմաս Արծրունի գտած է պատմութիւնս «Ի Համասոտութեան Արքահամու խոստովանողի» (80): Եթէ «Արքահամ» անունը հարազատ է վկայութեանս մէջ, պէտք է Համասոտութեան հեղինակը նոյնացնել Տարսոնի եւ Մամիկոնեանից Արքահամ Եպիսկոպոսի հետ որ երկիցս

կը յիշուի Յովհաննէս կաթողիկոսի 568—570 տարիներուն առ Սիւնեաց Վրթանէս եւ Աղուատարիներուն առ Սիւնեաց Վրթանէս եւ Աղուատարիներուն (Գիրք թղթոց, 78, 81): Շատ հաւանական է, որ Արքահամ զրաժ ըլլայ 571ի անցքերու համառօտ մէկ պատմութիւնը. ինքը սիրող էր զրականութեան, ծանօթ են իրմէ մանր զրական գործեր¹⁵:

Փոփոխութեան ենթարկուած գլխաւոր անուններն են.

ա. Շաւասպ Արծրունի = Վահան Սիւնեաց տէր (Գիրք թղթոց, 78):

բ. Վնդոյ մարզպան եւ Պարսից մոզպետ = ձիւհր-Վնասպ Սուրէն մարզպան (եւ «հարապետ»):

գ. Վարդան Մամիկոնեանի անունը մնացած է անաղարտ:

դ. Ռշտունեաց տիրոջ Տաճատի անունը կարող է նոյնպէս պատմական համարուիլ. կը գրէ Ասողիկ թէ Դենշապուհ (ընդ մէջ 557—563) «զորմզղական հուրն վառեաց ի Ռշտունիս եւ ստիպէր զբրխտոնեայս կրակի երկիր պագանել յազազս որոյ բազումք մեռան» (84). ուստի կար պատճառ, որ Ռշտունեաց տէրն Տաճատ եւ Վահրիճ Անձեւացեաց տէրը ամէնէն յառաջ ոտք ելլէին: Երկու անուններս ալ անձանօթ են Ղ. Փարպեցւոյ: 451ին ներս ալ անձանօթ են Ղ. Փարպեցւոյ, 45, Անձեւացեաց տէրն էր Շմաւոն (Փարպ., 45, 47, 75, 86), իսկ Ռշտունեաց տէրը՝ Արտակ (անդ, 47, անգամ մը միայն յիշուած): 480ին Անձեւացեաց իշխանն է Սեւուկ եւ սեպուհն՝ Յոհանն (անդ, 127):

ե. Արծրունեաց տէրն է 451ին Մերշապուհ (Փարպ., 45, 47 եւն): Իսկ 480ին բարձուած էր «տէրութիւնն Արծրունւոյն» (Փարպ., 176):

Արտաքին եւ տոհմիկ աղբիւրներու տուեալները կարող ենք այսպէս ամփոփել.

Ա. Սոսրով Ա. զրդմամբ Մոզպետ (3) հրաման կ'արձակէ Հայաստան եւ Վրաստան (եւ Աղուատար) «Ի մի օրէնս մոզպետութեան» գառնալ (2, 3):

Բ. Կ'ուղարկէ Հայաստան եւ Վրաստան

¹⁵ Հաւանօրէն այս գրութիւնն էր «Երանելոյն Արքահամու Եպիսկոպոսին Տարսոնի Ստորագրութիւնն, իրաց եղիլոց, որ առ վաչագամ արքայ Աղուանից», որուն խորագիրն միայն պահուած է ծառընտիրներու մէջ. այս խորագրի տակ ներկայացուած զրուածքը «Վասն սուրբ ժողովոյն Եփեսոսի եւ լուծումն նետարի» մասն է Վրթանէս Քերզոզի «Ա-Դ ժողովոց» մասին գրած ընդարձակ գրութեան: Մամիկոնեան Արքահամ Եպիսկոպոսի եւ անոր գրուածքներու մասին հմմտ. Հանդ. Ա. մ. ս., 1910, էջ 39:

(եւ Աղուատար) պաշտօնեաներ (2)՝ այսինքն մարզպան մը (3, 4, 9), հազարապետ մը (10), մոզպետ մը (12) եւ մոզպետ (3), անոնց հետ գունդ մը՝ 2000 այրեւծի (3):

Գ. Հրամանն էր կանգնել ի Դուին (եւ ի Տիգրիս եւ ի Պարտաւ) ատրուշաններ (3, 12), քանդել եկեղեցիները (12). ստիպել ժողովուրդը երկրպագել կրակի (1—5, 12):

Դ. Հազարապետը (10) կամ Մարզպանը (3, 9). միաժամանակ մոզպետ էր (12). առանցն էր ձիւհր-Վնասպ, (տոհմին) նոր անունն էր ձիւհր-Վնասպ, (տոհմին) Սուրէն (10). Թովմաս Արծրունի կ'անուանէ Վնդոյ (12). այլք պարզապէս Սուրէն (4, 6, 7, 8, 9). նաեւ առանց անուան «մարզպան» (3): — Սուրէնի (Վնդոյի) որդին է Շիրոյ (12):

Ե. Մարզպան-հազարապետ-մոզպետ Սուրէնի հետ կը յիշուի նաեւ «Հայոց իշխան» մը՝ Շաւասպ Արծրունի (= Վահան տէր Սիւնեաց), ուրացեալ մը (12):

Զ. Հայոց իշխանն (12) եւ Մարզպանը (2, 3, 12). կը ձեռնարկեն կառուցանել կրակահարներ Արտաշատ (12) եւ Դուին (3, 12): անոնք կը քանդեն եկեղեցիները (12). կը ստիպեն ժողովուրդը երկրպագել կրակի (2, 3, 12). կը հարստահարեն ազատները (10, 12). Սուրէն «չնայր ընդ կանայս ազատաց» (10). կը սպաննէ զՄանուէլ Մամիկոնեան (4): Գանասպաննէ զՄանուէլ Մամիկոնեան (2, 12):

Է. Մամիկոնեան Վարդան (3—8), որդին Վասակայ (9, 10), բռնչին Հայոց (10), որ տոհմիւ եւ ճոխութեամբ երեւելի էր» (5), ամբարացած էր «Ի Տորոսականն Զուայր» (12):

Ը. Վարդանի նիգակակից օգնականներն են՝ Վարդ (4) Մամիկոնեան, Տաճատ Ռշտունի (12) եւ Վախրիճ Անձեւացի (12). իրեն կը յարի նաեւ Վահան Արծրունի (12):

Թ. Ժողովուրդը, եկեղեցականութիւնը եւ ազատները ըմբոստացած էին պարսիկ զորքի անաղարտութեան դէմ. ա. զրազաչտական քարոզութեանց (1—3, 12), Բ. Կրակատուններ կառուցանելու (3, 12), Գ. քահանաներու խոչտանգման (2, 12) եւ կանանց պատուի բռնաբարման (10) համար. Վարդան Մամիկոնեան «զայրացած էր եւ կը սպասէր զիպող ժամավակի սուսերահար ընելու զՍուրէն» (10), նակի սուսերահար ընելու զՄանուէլ Մամիկոնեան իւր եղբայրը (4): Ամէն փորձ միկոնեան իւր եղբայրը կրօնի բռնաբարուեալ կեցնելու Պարսիկները կրօնի բռնաբարութիւնէ, անյաջող կը մնայ:

Ժ. Հայ նախարարները կ'որոշեն ապստամբել արքայից արքայի դէմ եւ ենթարկուել Կայսեր իշխանութեան:

ԺԱ. Ի ծածուկ (5) հրեշտակութիւն կ'ուզարկեն Կայսեր (2, 5, 9). Յուստինոս Բ. յանձն կ'առնէ գրով եւ երդմամբ օգնել Հայոց (5, 9):

ԺԲ. Վարդան «հանդերձ միաբանութեամբ ամենայն Հայաստանեօք» կը բարձրացնէ ապստամբութեան դրօշը (4, 9, 10, 12):

ԺԳ. Հայ բանակը (20.000 վառեակը ի դէմ. 3), «յանկարծօրէն» (9, 12), կը յարձակի մարդկանի բանակին (15.000 սյրեւծի) վրայ (4): Կը խորտակեն պարսիկ զօրագունքը (3, 9, 10, 12):

ԺԴ. Հայոց իշխանը (Շաւուսպ Արծրունի 12 = Վահան) սուսերահար կ'ըլլայ Վարդանէն (12): — Սուրէն կը սպանուի (2—10) սուսերահար (10) կամ Գունոյ ատուշանին մէջ կ'այրի (12), իրեն հետ իր որդին Շիրոյ (12). անոր տունը կրակի կը տրուի (8):

ԺԵ. Սուրէնի սպանիչն է Չաւրակ Կամսարական (11). ուրիշներ այս դերը կը վերագրեն Վարդանի (7—10) կամ Տաճատ եւ Վահրիճ Արծրունիներու (12):

ԺԶ. Սուրէնի գլուխը կը տարուի Յուստինիանոսի, որ Կարնոյ հոովմէական բանակին հրամանատարն էր (3):

ԺԷ. Փախստականք կը հետապնդուին մինչեւ Նախջեան:

ԺԸ. Ոմն, որ զաղա կ'աճապարէր գուժել Խորովի Հայոց ապստամբութիւնն եւ պարսիկ բանակի սպառնալու ընաջնջումը, կէս ճանապարհին կը բռնուի (11):

ԺԹ. Այս դէպքը տեղի կ'ունենայ Խորովի ԽԱ. եւ Յուստինոսի է. տարւոյն, այն է 571ին, ըստ Ասողկան՝ Փետրուար 2ին (Երեւոյն չարթի) ի Գունին:

Ի. Հայոց ապստամբութիւնը պատճառ կ'ըլլայ Պարսից եւ Հոովմայեցւոց մէջ կնքուած 50ամեայ խաղաղութեան լուծման (1—5, 9, 10):

Ի. Հայոց հետ միաժամանակ կ'ապստամբին Վերք (եւ Աղուանք) եւ կ'ենթարկուին Կայսեր իշխանութեան (1, 3, 4):

(Շարունակելի):

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



ՍՍՍՍՆԵՆ ԿԵՐՊԱՍԻ ԿՏՈՐ ԷԶՄԻՍՏՆԻ ԹԻՒ 1759ՆԺ. ՉԵՌԱԳՐԻ ԿԱԶՄԻ ՄԷՋ

Ա.


Կազմերի հետ կապուած արուեստի եւ մշակոյթի մասին առիթ ենք ունեցել յատուկ ուսումնասիրութիւն գրելու Տ. Արտաւազդեանի «Տաթև»-ի 2. հատորի մէջ, որ եւ արտատպուել է առանձին գրքոյկով՝ «Մի էջ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութիւնը» վերնագրով¹: Ներկայիս կամենում ենք մի նոր ապացոյց եւս տալ, թէ ի՞նչ թանկազին արժէքներ ունին քաղաքային ձևապատկերների կազմերի բազմակողմանի ուսումնասիրութեան անհրաժեշտութեամբ. էջմիածնի պետականացած մատենադարանի Թ. 1759 նժ. ձեռագիրը արժանի է յատուկ ուշադրութեան իւր կազմի կողերի ներսի երեսներին կպցրած կերպասի կտորներով: Բայց ծանօթանանք նախ Ձեռագրի եւ նորա ծագման խնդիրներին հետ:

Ձեռագիրը ըստ բովանդակութեան Գործք Առաքելոցն է Կաթուղիկեայց եօթ թղթերի հետ, Եւթաղի յառաջարանով Յանկերով եւ Ազերսով, բաղկացած հաստ մազաղաթի 233 մեծաղբի թերթերից, խոշոր երկաթագրով, երկսիւն, իւրաքանչիւրը 27½ × 7 սմ. մեծութեամբ: Հնագրական տեսակէտով ուշագրաւ է, որ փոքր երկաթագրով վերնաղբերների մէջ, թէեւ հազուադեպ, գործադրուում են բոլորովին ձեւեր. օր. 11 ա. յ կամ 187 ա. եռազիծ ա. Գրչութեան, ինչպէս եւ մանրանկարչութեան մէջ ոսկին շատ հազուադեպ է, եղածն էլ կարմիր փոշոսկի. առ հասարակ սակու փոխարէն այստեղ գործադրուում է դեղին գոյնը, նաեւ լուսանցքի զարդերի յատակի համար, որ հնութեան նշաններից մէկն է: Գրիչն է Գրիզոր, որին օգնել է քանոնելու մէջ մի թերթ կարուած է, արմատը նկատելի բացի դորանից առաջին տետրակը եօթ թերթ ունի, մինչդեռ մնացածները ութ. հաւանօրէն թերթի առաջին երեսին մանրանկար էր կամ խորան: Պակաս է եւ վերջից, բայց ոչ բնագրից, այլ Եւթաղի Աղերսից. վերջին խօսքերն են. «Վայ է ինձ յորժամ զմտաւ ածեմ զփոփոխմունս զամենայն ինչ մարդկան...»: Ժամանակն ու տեղն անյայտ:

¹ Հալէպ, 1930:

Բ.

- Յիշատակարաններն են՝
- ա. 43 ր. Ներքեւի լուսանցքում, յետին գրչով, հին անցման շեղագրով. «Մանասէ փոքրիկ տղայ լալով ասեմ տէր ողորմեայ ար»:
- բ. 61 ա. Ներքեւի լուսանցքում փոքր երկաթագրով, գրչի կողմից. «Տր Աճ աւգնէ Յովանիսի, որ նա աւգնէ ինձ քանոնի»:
- գ. 64. Ներքեւի լուսանցքում, նոյն գրով. «Վայա նէն իմ որթոյն»:
- դ. 151 ր. Գործոցի վերջում, գրչի ձեռքով, բնագրի երկաթագրով. «Տր Աճ ի քում գաղտեանդ ողորմեա Ամիր Սարգսին. ամէն» (վերջին բառը փակագրով):
- ե. 169 ր. Բնագրի երկաթագրով. «Չստացող գրոցս յիշեա» (վերջին բառը փոքր երկաթագրով):



Պատկ. 1.

- գ. 186 ր. Գրչի խոշոր երկաթագրով. «Չստացող գրոցս զՄխիթար յիշեալիք եւ գախմար գրիչս զԳրիզոր ամէն»:
- է. 197 ր. Կարմրաղեղով, նոյն խոշոր երկաթագրով. «Տր Աճ աւգնական լեր Չաքարէի յամենայն ժամ ամէն» (վերջին բառը փակագրով):
- Նաեւ յունարէն խոշոր տառերով. AMEH ՅAMEH:
- ը. 217 ր. Փոքր երկաթագրով, գրչի ձեռքով. «Չանպիտան գծողս յիշեայ»:
- բ. 218 ա. Ներքեւի լուսանցքում. «Վայ մագաղաթիս եւ ոյր գրիս»:



Պատկ. 2.

Չաքարէն: Առաջին միտքը, որ ծագում է այս հարցին որպէս պատասխան, Գէորգի Գ. ի օրով գործող Ամիր Սարգսի մասին է, վախճանուած 1187 թուին, եւ նորա աւագ որդի Չաքարէ մեծի, վրաց եւ Հայոց միացեալ գործերի ամիր սպասաւարի, Թամարի եւ նորա որդու Գէորգի Լաչայի առաջին տարիներում, վախճանուած 1212 թուին²: Ամիր Սարգիս էր կոչուում նաեւ Չաքարիայի մօրեղբայրնէրից մէկը, Մահկանաբերդի Գուրգ իշխանի

² Չաքարէան, Ա. 28: Գանձակեցի, Ղուկ. հրատ. 154: Ձեռ. էջմ. Թ. 230/1519 (Կար. 233), Բագնայրի աւետարանի յիշատակարանը: